

Պ. Ն. ՊԵՐԵՔՆՈՍ

ՄՏԿ-ՆԵՐԻ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅԵՎ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԵՋ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Հրդեհները հանգցնելու տակտիկան գյուղական պայմաններում)

628

Պ-52

ՍՈՒՆԻ

Ս.Ն.Պ.Ե.Բ.Ե.Յ.Ն.ՈՍ
Հայաստանի վարչության հրդեհաշիջ
բաժին

628

7-51

Պ. Ն. ՊԵՐԵԲԵՅՆՈՍ

ՄՏԿ-ՆԵՐԻ, ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՅԵՎ,
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՇԵԶ
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Հրդեհները հանգցնելու տակտիկան գյուղական պայմաններում)



22 JUL 2013

ՓԱՐԳՄ. ՅԵՎ ՍՐԲԱԳ. Գ. ՎՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԲԱԳՐԵՑ Ս. ԶԱՏԻՆՅԱՆ



60376-67

Պետրատի տպարան

Պատվեր 87, գլավլիտ 323, տրամ 3000

Բրոշյուրում ֆնուրյան են առնված գյուղական պայման-
ներում հրդեհները հանգցնելու հարցերը:

Բրոշյուրը նկատի յե առնված կոլտնտեսական ակտիվի և
կամավոր հրդեհաշեջ բջիջների հրամանատարների համար:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հակահրդեհային միջոցառումների թվում գլխա-
վոր դերը պատկանում է հրդեհաչջ պրոֆիլակտիկա-
յին (նախազգուշացմանը): Հրդեհաչջ պրոֆիլակտի-
կայի համար անհրաժեշտ լրացուցիչ պայման է
հանդիսանում հրդեհների դեմ ակտիվ կերպով պայ-
քարելու միջոցների լավագույն կազմակերպումը:

Հրդեհների դեմ ակտիվ կերպով պայքարելու գոր-
ծի կազմակերպումն առանձնապես անհրաժեշտ է սո-
ցիալիստական գյուղատնտեսության պայմաններում,
ուր առաջացող հրդեհները շատ հաճախ հսկայական
վնասներ են պատճառում:

Յուրաքանչյուր կոլտնտեսություն, ՄՏԿ, խորհ-
տնտեսություն և գյուղ՝ հրդեհների դեմ ակտիվ պայ-
քար մղելու համար պետք է ունենա անհրաժեշտ ին-
վենտարով և սարքավորումով ապահովված ու լավ
պատրաստված անհրաժեշտ թվով հրդեհաչջ խումբ,
կամ հրդեհաչջ կամավոր բջիջ (դրուժինա):

Հրդեհաչջ աշխատավորը վորքան շատ է մասնակ-
ցում հրդեհներ հանգցնելուն, այնքան ավելի հմտու-
թյուն և փորձ է ձեռք բերում այդ գործում: Սակայն
վատ կլինեք, յեթե հրդեհաչջ աշխատավորները հրդեհ
հանգցնելու տակտիկան սովորեյին միմիայն հենց հր-
դեհներում: Այդ պետք է անել առաջուց կազմակերպ-
ված յեղանակով հրդեհը հանգցնելու ձևերն ու յեղա-
նակներն ուսունասիրելու միջոցով:

Ներկա բրոշյուրի նպատակն է գյուղում հրդեհ-
ները հանգցնելու տակտիկայի վերաբերյալ տալ գործ-
նական համառոտ ցուցումներ:

1. ՀՐԴԵՀՆԵՐԻ ԴԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՁԵՎՈՎ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական գյուղատնտեսության մեջ հրդեհների դեմ ակտիվ պայքար պետք է մղել կազմակերպված ձևով, վորի համար անհրաժեշտ է ունենալ լիակատար և լավ պատրաստված հրդեհաչեղ ոգնություն: Այդպիսի ոգնության բացակայությունը և բնակչության չկազմակերպված ձևով դեպի հրդեհաչիջման գործն ունեցած պասսիվ վերաբերմունքը հաճախ առաջ է բերում մեծամեծ թշվառություններ:

Հրդեհների հետևանքով ամեն տարի կրակի բաժին են դառնում հազարավոր բնակելի տներ և զանազան շենքեր: Կրակը վոջնչացնում է ընտանի կենդանիները, անասունները, գյուղատնտեսական ինվենտարը և բերքը: Շատ հաճախ հրդեհը պատճառում է նաև մարդկային զոհեր:

Առանձնապես անհրաժեշտ է լիակատար և լավ պատրաստված հրդեհաչեղ ոգնություն ունենալ ներկայումս, յերբ ջախջախված դասակարգային թշնամու մնացորդները գուրկ լինելով ուղղակի կերպով դիմադրելու և բռնություն գործ դնելու հնարավորությունից, վործում են գաղտնի հրկիգումներով սոցիալիստական գյուղատնտեսությանը վնասել: Ուստի յուրաքանչյուր կոլտնտեսության, ՄՏԿ-ի, խորհտնտեսության և գյուղի առաջանակարգ խնդիրն է կազմակերպել պրոֆեսիոնալ հրդեհաչեղ խումբ, կամ կամավոր հրդեհաչեղ բջիջ, ոթտելով նրանց հրդեհաչեղ անհրաժեշտ ինվենտարով ու սարքավորումով և շարունակ լիակա-

տար մարտական պատրաստության մեջ պահելով նրան:

Հրդեհաչեղ խումբը կամ կամավոր բջիջը, վորպեսզի արագ կերպով և բավարար հրդեհաչեղ ոգնություն ցույց տան, անհրաժեշտ է նրանցում ունենալ հրդեհաչեղների մշտական հերթապահություն: Ձիակառքեր ունենալու դեպքում հրդեհաչեղ խմբում, կամ կամավոր բջիջում պետք է ունենալ մշտական (հերթապահ) ձիեր՝ հերթապահ հրդեհաչեղներին, հրդեհի ինվենտարն ու սարքավորումը հրդեհի տեղերը հասցնելու համար: Ձիերի թիվը վորոշվում է կառքերի քանակով և սպասարկվող տնտեսության կարողությամբ: Ձիերի հերթապահության կարգն ամեն ամիս սահմանում է խորհտնտեսության վարչությունը կամ ՄՏԿ-ի ու կոլտնտեսության ղերեկտորը նախապես՝ մեկ ամիս առաջ:

Հրդեհաչեղ ոգնության արագությունը կախված է նաև նրանից, թե վորքան ժամանակին է հայտնաբերվել առաջացած հրդեհը և ինչ արագությամբ են այդ մասին հայտնել հրդեհաչեղ խմբին կամ կամավոր բջիջին: Այդ նպատակով յուրաքանչյուր կոլտնտեսության, ՄՏԿ-ի և խորհտնտեսության մեջ, խմբի կամ բջիջի պետի կարգադրությամբ պետք է նշանակվեն գիշերային, իսկ դաշտային աշխատանքների ժամանակ, նաև ցերեկային հատուկ պահապան հերթապահներ, վորոնց վրա պարտականություն է դրվում շրջել իրենց հանձնարարված տեղամասերը, հրդեհ առաջանալու դեպքում տազնապ տալ և հրդեհը հանգցնելու համար նախնական միջոցներ ձեռք առնել:

Յեթե հրդեհաչեղ խմբին կամ կամավոր բջիջին կից գոյություն ունի դիտելու աշտարակ (вышка), դրա վրա պետք է որ ու գիշեր պոստ դնել:

Հրդեհի մասին հուսալի կերպով և արագ լուր տալու համար՝ կոլտնտեսության, ՄՏԿ-ի և խորհտնտեսության առանձին կետերը հրդեհաչեղ խմբի և կամավոր բջիջի հետ պետք է կապվեն ելեկտրական զանգով, հեռախոսով կամ խորհտնտեսության զանազան մասերում պետք է կախվեն զանգեր կամ այլ տե-

սակի հարմարություններ հրդեհի տազնապ տալու համար:

Միմիայն հրդեհաշեջների մշտական հերթապահություն ունեցող հրդեհաշեջ խմբի կամ կամավոր բջիջի գոյությունը, ինչպես և շրջիկ պահակները, դիտողական աշտարակի պոստը և հրդեհների մասին արագ տազնապ հաղորդող զանգերն ու հեռախոսային կապը դեռևս ապացույց չեն, թե հրդեհաշեջ ոգնության գործը կանոնավոր է: Հրդեհները հանգցնելու համար մեծ նշանակություն ունի նաև կոլտնտեսությունը, ՄՏԿ-ն և խորհանտեսությունը ջրով ապահովելը. հրդեհաշեջ խումբն ու կամավոր բջիջը վերջին ել մարտունակ լինեն, սակայն յեթե բավարար քանակով ջուր չկա, նրանք միանգամայն անզոր կլինեն հրդեհների դեմ պայքարելու:

Ահա թե ինչու հրդեհի ջրամատակարարման հարցը պետք է լուծվի յուրաքանչյուր կոլտնտեսության, ՄՏԿ-ի և խորհանտեսության մեջ միաժամանակ, հրդեհաշեջ խումբը կամ կամավոր բջիջը կազմակերպելու հետ միասին:

Հակահրդեհային պաշտպանողական միջոցառումների կազմակերպման ամբողջ աշխատանքի հաջողությունն զգալիորեն կախված է նաև հասարակայնությունն այդ աշխատանքի մեջ քաշելու ընդունակությունից:

Ահա թե ինչու յուրաքանչյուր կոլտնտեսության, ՄՏԿ-ի և խորհանտեսության մեջ բավականաչափ լավ պատրաստված հրդեհաշեջ ոգնության ճիշտ կազմակերպման խնդիրները չպետք է լուծի միմիայն հրդեհաշեջ խմբի կամ բջիջի պետք: Այդ գործի մեջ պետք է քաշել աշխատավորության լայն մասսաները և նրանց անմիջական աջակցությամբ հրդեհների դեմ կազմակերպված ձևով պայքար մղել:

2. ՀՐԴԵՀԱՇԵՋ ԽՄԲԻ ՀԱՎԱՔՎԵԼԸ ՏԱԳՆԱՊԻ ԺԱՄԱՆԱԿ, ՄԵԿՆԵԼՆ ՈՒ ՀՐԴԵՀԻ ՏԵՂԸ ՀԱՍՆԵԼԸ

Հրդեհաշեջ խմբի կամ բջիջի տրամադրության տակ յեղած գումակն ու տեխնիկական սպառազինումը պետք է մշտապես լիակատար մարտական պատրաստության մեջ լինեն հրդեհի վայրը մեկնելու համար: Ամեն ինչ պետք է այնպիսի վիճակում լինի, վոր խմբի, բջիջի անձնակազմը տազնապի դեպքում կարողանա ամենակարճ ժամանակում հավաքվել և մեկնել հրդեհի վայրը:

Տազնապը տրվելիս հրդեհաշեջ խումբը կամ բջիջը պետք է հավաքվի արագ կերպով, անաղմուկ և առանց շփոթվելու: Յուրաքանչյուր հրդեհաշեջ իր պարտականությունները կատարում է մարտական հաշվի աղյուսակի համաձայն, առանց յերբեք իր գործից կտրվելու:

Յեթե պահանջվում է ոգնել իր ընկերոջը, վորը չի կարողանում իր վրա դրված պարտականությունը կատարել, այդ պետք է անել իր գործը վերջացնելուց հետո, առանց հանդիմանության և լիակատար լուրթյամբ:

Կառքերը մեկնելու համար պատրաստ լինելու դեպքում այդ մասին առանձին-առանձին քարճրաձայն զեկուցում են հետևյալ բառերով. «առաջինը պատրաստ», «յերկրորդը պատրաստ» և այլն:

Հավաքը վերջանալուց հետո հրդեհաշեջ խմբի կամ բջիջի գումակը անդից շարժվում է քայլով և ապա ամենախոշոր վարդով (рысь) ու հարմար ճանապարհով մեկնում է հրդեհի վայրը, ուղղությունն ընդունելով ճանապարհի աջ կողմի վրա և կառքերի միջև հեռավորություն պահելով 15 մետրից վոչ պակաս:

Յեթե խումբը կամ բջիջն իրենց կազմի մեջ ունեն ավտոմեքենաներ, թույլ է տրվում այդ մեքենաները բնակավայրի սահմաններում քշել մեկ ժամում 45

կիւմետրից վոչ արագ, պահպանելով մեքենաների միջև 20 մետրից վոչ պակաս հեռավորութիւն:

Գումակի շարժումը ղեկավարում է ամենաառաջից ընթացող կառքի պետը, վորտեղից պետք է տրբվեն սահմանված ազդանշանները՝ ճանապարհն ազատելու համար:

Ճանապարհների վորտրաններում, խաչմերուկներում և յերկաթուղագծերից անցնելիս գումակի շարժումը պետք է դանդաղեցնել:

Կառքերից մեկի աղետի կամ ակամա կանգ առնելու դեպքում խմբի կամ բջիջի մնացած գումակը պետք է կանգ առնի պատճառները պարզելու և անհրաժեշտ դեպքերում ոգնութիւն ցույց տալու համար:

Շարժումը շարունակվում է խմբի կամ բջիջի պետի կամ նրան փոխարինողի կարգադրութիւմը: Հանկարծակի կանգ առնելու դեպքում հետեւից յեկող կառքերը պետք է թեքվեն դեպի ձախ, վորպետղի առջևից դնացող կառքերի հետ չընդհարվեն:

Ուումբը կամ բջիջը պարտավոր են հասնել հրդեհի վայրը, չնայած հանդիպողների այն բոլոր հայտարարութիւններին, թե հրդեհն արդեն հանգցված է:

Յեթե հրդեհի վայրը հասնելիս յերեւա, վոր հրդեհի հանգամանքները բավականաչափ պարզ են, խմբի կամ բջիջի պետն իսկույն և յեթ բոլոր անհրաժեշտ հրամանները տալիս է իր տրամադրութիւնն տակ յեղած ուժերն ու միջոցները ծավալելու: Այն դեպքերում, յերբ հրդեհի տեսանելի նշաններ կան, խումբը կամ բջիջը պետք է դիտենա այն դիրքը, վորը հնարավորութիւն է տալիս նրան ամենակարճ ժամանակամիջոցում, առանց վորևէ լրացուցիչ մանեվրի, հրդեհի մարտական հանգամանքների համեմատ ծավալելու իր ուժերը:

Այդ նպատակով առջևի կառքը (նասոսա—սայլային կամ նասոսա—տակառային) կանգ է առնում հրդեհի վայրի մոտ, հրդեհի ոբյեկտից 5—10 մետր հեռավորութիւն վրա, իսկ մնացած կառքերը՝ առջևի կառքի յետեւից, պահպանելով մեկը մյուսից 10 մետրից վոչ պակաս հեռավորութիւն:

Հրդեհաչեջները շարվում են իրենց կառքերի մոտ՝ յերեսները դարձրած դեպի հրդեհի ոբյեկտը: սպասելով պետի հրամանին, վորը խմբի ջոկերի պետերից կամ բբջիջի ջոկատների պետերից մեկի հետ դնում է շենքի նամ տերիտորիայի ներսը հետախուզութիւնն՝ հրդեհի պատճառները պարզելու համար:

Յեթե հրդեհաչեջ խմբի կամ բջիջի գումակի կադմում կան ավտոնասոս, մոտոպոմպ և ձեռքի նասոս, հրդեհի տեղը հասնելուն պես անհրաժեշտ է դրանք անմիջապես մոտեցնել ջրի մոտակա աղբյուրին, վորտեղ դրվում է ավտոնասոսը կամ մոտոպոմպը և պատրաստվում է աշխատանքի համար:

3. ՀՐԴԵՀԻ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Հրդեհի հետախուզութիւնը կատարվում է պարզելու՝ ա) արդյոք հրդեհը վտանգ է սպառնում մարդկանց և կենդանիներին և ի՞նչ գործիքներ են անհրաժեշտ նրանց ոգնութիւն հասցնելու համար, բ) հրդեհի ոջախը, ի՞նչ է վառվում, հրդեհի մեծութիւնը և կրակի ու ծխի տարածվելու հնարավորութիւնն ճանապարհները, գ) շենքի բնույթն ու նյութերը և ինչ նյութերից են պատրաստված նրա առանձին մասերը, դ) ի՞նչպես է պրանավորված շենքը և վորտեղ են գտնվում յեւթի ճանապարհներն ու բրանդմաուերները, ե) ի՞նչպիսի գործիքներ են անհրաժեշտ հրդեհը հանգցելու համար, զ) փողակների դիրքերը, ե) հրդեհի այլ առանձնահատկութիւնները:

Հետախուզութիւնը պետք է կատարել արագ և ստանարյուն կերպով, տեղն ու տեղը ձեռնամուխ լինելով այն բանին, ինչ գլխավոր է և հիմնական, ինչ անհրաժեշտ է հրդեհաչիջման ընդհանուր պլան կազմելու՝ հրդեհն անմիջապես դադարեցնելու համար:

Հետախուզութիւնը կատարելիս անձնական նախադուշացման բոլոր յիջոցները պետք է ձեռք առնել չթունաւորվելու, փրումների տակ չմնալու և այլն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, վոր շատ հա-

ճախ հետախուզությունը պետք է կատարել ծխով լցված չենքում, այդպիսի դեպքերում պետք է ոգտվել ուսպիրատորներով և հակածխային գործիքներով: Յեթե այդպիսի միջոցներ չկան, պետք է քիչ ու բերանի վրա քափաղի լուծույթով կամ ուղղակի ջրով թրջած թաշկի-նակ կամ շորի կտոր պահել, վորպեսզի շնչառությունը հեշտ կատարվի:

Ծխով լցված չենքի միջով պետք է առաջ շարժվել գգույշ կերպով, պատերի ուղղությամբ և անպայման մոտեցնել ունենալ փրկիչ պարան՝ փաթաթած մեջքին կամ գոտուն հագցրած: Պարանի մյուս ծայրը պետք է ամրացվի չենքի ներսը տանող մուտքին կամ պահվի դրսում մնացածների ձեռքում:

Յեթե ծուխը չենքի մեջ լցվել է վերևից (որինակ, յեթե առաստաղն է վառվում), պետք է չենքի մեջ շարժվել սողալով՝ գլուխը հատակին մոտեցրած, վորովհետև այդտեղ ծուխը քիչ է և հեշտ է շնչել:

Այն դեպքերում, յերբ վառվում է հատակը, կամ հատակի տակը, և յեթե ծուխն անցնում է ցածի հարկի առաստաղից, պետք է շարժվել ամբողջ հասակով:

Նկուղներն իջնելիս, շարժումը սանդուխքների վրայով տեղի յե ունենում սողալով, թիկունքը դարձրած դեպի առաջ, իսկ յերեսը՝ դեպի չենքի յեղքը:

Շենքերը գիշեր ժամանակ լուսավորելու, ինչպես և հետախուզության ժամանակ ծխով լցված չենքերը լուսավորելու համար համապատասխան ստորաբաժանումների տեղերում հրդեհաչեջները սովորաբար ոգտվում են նավթի ջահերով և «Չղջիկ» լապտերներով:

Թույլ է տրվում այդպիսի լուսատու անոթներով չենքերը մտնել այն դեպքում միայն, յեթե նրանցում պայթուցիկ նյութեր, գոլորչիներ, գազեր և հրավտանգ հեղուկներ չկան: Հակառակ դեպքում պետք է կիրառել լուսավորության այնպիսի անոթներ, ինչպիսին են Դե-վիի լապտերները և ելեկտրական լապտերները, վորոնք ունեն լույսի միացման և անջատման զրահավորված միացումներ:

Հետախուզությունը և ուժերի դասավորությունը

վերջանալուց հետո, խմբի կամ բջիջի պետն աշխատանքների ժամանակ պետք է մշտապես հետևի հրդեհի հանգամանքների փոփոխությանը և ըստ անհրաժեշտության համապատասխան միջոցներ ձեռք առնի նրան արագորեն մեկուսացման և լիկվիդացիայի յենթարկելու համար:

4. ՄԱՐԴԿԱՆՑ, ԿԵՆԴԱՆԵՐԻՆ, ԿՈՆՏԵՆԵՐԱՅԻՆ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՓՐԿԵԼԸ

Յեթե հետախուզությամբ և շրջապատողների ճիշտ հայտարարություններով պարզված է, վոր մարդկանց և ընտանի կենդանիների համար վտանգ կա, հրդեհաչեջ խումբը կամ բջիջն ամենից առաջ պետք է աշխատեն նրանց փրկել, միաժամանակ իրենց միջոցների մի մասը տրամադրելով հրդեհը հանգցնելուն:

Փրկելու և հանգցնելու համար միաժամանակ կատարվող գործողությունների ժամանակ խմբի կամ բջիջի պետը պարտավոր է խմբի կամ բջիջի ամբողջ աշխատանքին ընդհանուր ղեկավարություն ցույց տալ, առանձնապես ծանր դեպքերում պետք է փրկության գեկավարութունն իր վրա վերցնի պետը:

Սպառնալից վտանգի դեպքում մարդիկ սովորաբար իրենց կորցնում են և միայն ինքնապաշտպանության բռնազդին անձնատուր լինելով՝ շատ հաճախ կրակից ու ծխից թաղնվում են այնպիսի տեղերում, ուր նրանց գտնելը դժվար է լինում:

Այդ պատճառով չենքերը պետք է զննել առանձին ուշադրությամբ, ըստ վորում մեծահասակներին պետք է վորոնել մահճակալներում և նրանց տակ, պահարաններում, պատուհաններում, վառարաններում և վառարանների վրա, խորթանոցներում ու չարդախներում: Գիտակցությունը կորցրածներին կարելի յե գտնել նույնպես պատուհանների մոտ և սանդուխքների վրա:

Յերեխաներին ամենից հաճախ գտնում են մահճակալներում, որորոցներում և սեղանների տակ: Գիտակցությունը չկորցրած մարդկանց պետք է հանգստացնել և նրանց նահանջի ճանապարհ ցույց տալ, իսկ անհրա-

ժեշտութեան դեպքում նրանց դուրս բերել. գիտակցութեանը կորցրած մարդկանց պետք է շենքից դուրս բերել:

Վառվող շենքում կիսադիտակից վիճակում գտնվող մարդ հայտնաբերելու դեպքում պետք է նրա թեմբի տակից բռնել և դուրս քաշել կամ շալակելով շենքից դուրս բերել: Յերեսաներին պետք է դուրս բերել գլուխած՝ նրանց դեմքն այրվելուց պաշտպանելով:

Շենքերի վերին հարկերում կրակով ու ծխով արգելվածներին պետք է փրկել տնային սանդուխքներով: Յեթե այդ հնարավոր չէ, նրանց հարկավոր է ողնել գլուխից, վորի համար, պայմաններին հարմարվելով, կիրառում են հրդեհաշիջ սանդուխքներ:

Թույլերին, հիվանդներին և ծխի մեջ վառվողներին ցած են իջեցնում փրկիչ պարաններով կամ գործիքներով:

Դեպքեր են լինում, յերբ տեղ հասած հրդեհաշիջ խումբը կամ բջիջը հանդիպում է խուճապի մատնված մարդկանց, վորոնք մտադրվել են վառվող շենքի պատահանից իրենց դուրս գցել: Այդպիսի հանգամանքներում անհրաժեշտ է գործել առանձնապես արագ կերպով, և տնային սանդուխքներով մարդկանց մոտենալու կամ դրսի կողմից հրչել սանդուխքների ողնությամբ նրանց փրկելու անհնարինություն ղեպքում անհրաժեշտ է վտանգի յենթականերին համոզելով սպասել տալ՝ նրանց նետվելու տեղում մատրացներ, ներքնակներ, բարձեր և այլն փռելով կամ յեթե հնարավոր է, այդ տեղերին հարդով կամ ծղոտով լցված սայլեր մոտեցնելով:

Ընտանի կենդանիներին փրկելիս անհրաժեշտ է լիակատար հանգստություն և ռառնասրտություն հանդես բերել, գործելով առանց աղմուկ-աղաղակի:

Ամենից լավ է, վոր ձիերին փրկեն այն մարդիկ, վորոնք մշտապես նրանց հետ գործ ունեն յել իրար ճանաչում են:

Զիռն դուրս քաշելուց առաջ նրան պետք է հազցնել աքիկը (խամուտ), թամբը, պետք է վրան գցել սթարը (թառիկը) և գլխին մեշոկ հագցնել:

Խոշոր յեղջուրավոր անասուններին պետք է դուրս հանել մեկ-մեկ գլուխը ծածկած յել յեղջուրներից սրան կապած, — մեկը պետք է անասուններին յետեմից քշի:

Յեթե ձիերին կամ խոշոր յեղջուրավոր անասուններին փրկելիս նրանք համառում են, լավ է ախոռներից դեպի դուրս տանող ուղղությամբ գոմաղբից ճանապարհ պատրաստել, վորի վրայով յել նրանց դուրս բերել փողոց: Յերբմն կենդանիները սիրով են առաջ շարժվում, յեթե նրանք գոմաղբի հոտ են տունում:

Վոչխարներին յել աճերին փրկելիս անհրաժեշտ է նրանցից մեկի յեղջուրներից բռնելով գոռով դուրս քաշել, իսկ նրա յետեից ամբողջ հոտը դուրս քշել, հակառակ պարագային պետք է անասուններին դուրս հանել գրկելով:

Խոզերին պետք է դուրս քաշել մեկ-մեկ յետեի վորտքերից բռնած:

Յեթե մանր անասուններին (վոչխարներին, այծերին, խոզերին) չի հաջողվում վերահիշյալ միջոցներով վառվող շենքից արագ կերպով դուրս հանել, պետք է անասունների վրա ջուր ցանել, վորոնց ջրից խրտնեցնելով յել սեղմելով մոտիկ գտնված մուտքի կամ հրդեհի հակառակ կողմի պատի մեջ առաջուց բաց արած անցքին՝ ստիպել նրանց մի քանիսին այդտեղից դուրս գալու, իսկ այնուհետեմ մյուսները յենթարկվելով հոտի տրամադրությունը, իրենք իրենց դուրս կգան:

Խոճկորներին, գառներին յել ընտանի թռչուններին վառվող շենքից պետք է դուրս բերել յել հրդեհի տեղից հեռացնել՝ առպրակներին, գամբյուղների մեջ դրած յել այլն:

Փրկված բոլոր անասուններին պետք է քշել մի անվտանգ տեղ յել նրանց հսկողության տակ առնել:

Մեղուներին փրկելու դեպքում ամենից առաջ պետք է նրանց փեթակների վրա ջուր ցանել յել ապա փեթակների մուտքերը հողով կամ կավով ծեփել: Դրանից հետո անհրաժեշտ է փեթակները հրդեհի տե-

դից հեռացնել և մեղավապահին հանձնարարել փեթակներին մուտքերը բացել, վորպեսզի մեղուները չնշա-սպառ չլինեն:

Մեղուներին հարձակումից պետք է պաշտպանվել նրանց վրա ջուր ցանելով:

Կոլտնտեսություններում, ՄՏԿ-ներում և խորհտնտեսություններում տեղի ունեցած հրդեհների ժամամանակ մեծ մասամբ մարդիկ խուճապի յեն մատնվում, վորի պատճառով կոլտնտեսային յեվ պետական շատ արժեքավոր գույք կրակի բաժին է դառնում:

Տեղ հասած խմբի կամ բջիջի պետք բացի հրդեհի հանգցնելու գործողություններից, պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռք առնի նայել այդ գույքը վառվող ու վառվելու վտանգի յենթակա շենքերից փրկելու:

Անձնական կազմի սակավաթիվ լինելու պատճառով սովորաբար հնարավոր չի լինում խմբի կամ բջիջի ուժերով փրկություն կազմակերպել:

Այդպիսի դեպքում խմբի կամ բջիջի պետից պահանջվում է, վոր նա գործի մեջ քաշի հենց կոլտնտեսականներին, ՄՏԿ-ների յեվ խորհտնտեսությունների բանվորներին յեվ ծառայողներին, հանձնարարելով իրեն յենթակա պետերից կամ կոլտնտեսության, ՄՏԿ-ի ու խորհտնտեսության պատասխանատու անձնավորություններից մեկին ու մեկին ղեկավարելու փրկության աշխատանքները:

Կոլտնտեսային յեվ պետական գույքը Վառվելիս փրկվածին տեղավորելու համար խմբի կամ բջիջի պետը պետք է բնտրի յեվ փրկության գործը ղեկավարողին ցույց տա անվտանգ տեղ և հանձնարարի միլիցիային ու կամավոր հրդեհաչեջ բջիջի պահապան ջոկատի պետին փրկված գույքի վերաբերյալ անհրաժեշտ պահպանություն սահմանելու:

Փրկված գույքի պահպանության համար նշանակված հրդեհաչեջներն առանց պահապան ջոկատի պետի կամ բջիջի թույլտվության իրավունք չունեն իրենց պոստերից հեռանալու:

5. ԶՐՈՎ ՀԱՆԳՑՆՈՂ ՅԵՎ ԶՈՒՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԱՍՍՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր խորհտնտեսության, ՄՏԿ-ի, կոլտնտեսության մեջ յեվ գյուղական բնակավայրում հրդեհի ջրամատակարարման մասին պետք է նախապես հոգ տանել և նախատեսել այն թե՛ ամառվա, և թե՛ ձմեռվա համար: Վորտեղ կան բնական ջրի աղբյուրներ (գետեր, լճեր, լճակներ), դրանք պետք է հարմարեցնել արագ կերպով հրդեհաչեջ նպատակների համար ոգտագործելուն, անհրաժեշտ քանակությամբ հարմար մատույցներ յեվ նախասներ դնելու համար հարթակներ (платадка) պատրաստելով: Յեթե գետը ծանծաղ է և ջրառատ, պետք է նրա մեջ մի քանի տեղ ջրաբանդեր կապել, վորտեղ կարելի լինի բավականաչափ ջրի պաշար կուտակել:

Ձմեռն անընդհատ ջուր ստանալու համար պետք է կառուցվեն մատչելի մատույցներով մշտական անցքեր: Մշտական անցք պատրաստելը կայանում է նրանում, վոր սառույցը ծակում, նրա մեջ մտցնում են սարքին դատարկ տակառ, վորի հատակը պետք է ջրի մեջ սուզել սառույցի շերտից 25 սանտիմետր ցածր:


Վորպեսզի տակառը կայուն վիճակ ունենա, իրարահան չլինի, պետք է նրան դրսի կողմից ձյունով պատել յեվ վրան ջուր լցնելով սառեցնել:

Դրանից հետո տակառի վերեմի անցքը ծածկել ծառերի ձյուղերով կամ ծղոտով և նրա կողքերին նշանաձողիկներ դնել, վորոնք ցույց են տալիս անցքերի տեղերը:

Անցքից ոգտվելու համար հրդեհի ժամանակ բավական է ծառերի ձյուղերը կամ ծղոտը դեն գցել և տակառի հատակը լինգով ջարդել:

Ջրի բնական աղբյուրներ չլինելու դեպքում պետք է պատրաստել արհեստական ջրամբարներ, ջրհորներ, ջրափոսեր պատրաստելով, բնակելի ամբողջ տերիտորիայում միմյանցից համաչափ հեռավորության

60376-67



վրա ցիստերներ շարելով և այլն, նրանց արագ կերպով ողորդութեամբ համար:

Բնական կամ արհեստական ջրամբարների գոյութիւնից անկախ յուրաքանչյուր հրդեհաշեջ խումբ կամ կամավոր հրդեհաշեջ բջիջ կրակին առաջին անգամ արագ կերպով ջուր տալու համար պետք է ունենա ջրի վորոշ պաշար, վորը հրդեհի վայրը բերվում է տակառներով: Տակառների քանակը վորոշվում է յեղնելով այն հաշվից, վոր յուրաքանչյուր ձեռքի հրդեհաշեջ նասոսին պետք է ընկնի յերեք տակառից վոչ պակաս:

Դյուզական վայրերում, վորտեղ ջրմուղ գոյութիւն չունի, հրդեհների վրա ջուր են ցանում բացառապէս ձեռքի հրդեհաշեջ նասոսներով, իսկ վորոշ դեպքերում՝ նաև մեխանիկական նասոսներով—մոտոպոմպերով և ավտոնասոսներով, վորոնց գործածութիւնը վերջերս ավելի և ավելի մեծ ծավալ է ընդունում:

Հրդեհաշեջ նասոսներն աշխատանքի դնելիս ամենից առաջ անհրաժեշտ է պահպանել հետևյալ դիտավոր ընդհանուր պայմանը—անընդհատ ջուր մատակարարել: Նասոսները պետք է դնել վորքան հնարավոր է հրդեհի տեղին մոտիկ, սակայն այնպիսի հաշվով, վոր ձեռքի նասոսով ջուր քաշողները կամ մեխանիկական նասոսներին սպասարկողները ծխին և թուշող կայծերին մոտիկ չլինեն և կրակի ուժեղ տարածման ու հանկարծակի փոխվող հանգամանքների դեպքում կարիք չլինի դիրքը փոխելու:

Նասոսը բաց ջրափոսի մոտ դնելու դեպքում ծծող շլանգի ցանցը չպետք է ջրի հատակին դիպչի, վորպէսզի հանկարծ նրա մեջ տիղմ կամ ավաղ չլցվի: Դրա համար ծծող շլանգը պետք է պարանով ձգված լինի, կամ ընդունող ցանցը տեղավորվի ջրափոսի մեջ իջնող դուլլի կամ տակառիկի մեջ: Յեթե նասոսն աշխատանքի յե դրված ստորերկրյա ռեզերվուարից, ինչպէս և բաց ջրափոսից հատուկ հարթակի (площадка) կամրջի կամ սառույցի վրա, անհրաժեշտ է

ծծող շլանգն ամրացնել ընդունիչ անցքի մոտ կապված պարանով: Ձմեռ ժամանակ շլանգը պետք է իջեցնել անցքի մեջ՝ միաժամանակ նասոսը գործի գցելով: Ձմեռ ժամանակ անհրաժեշտ է նասոսներն անընդհատ գործի գցել, վորպէսզի նրանք չսառչեն:

Սառած նասոսները պետք է տաքացնել յեռման ջրով, իսկ այդպիսին չլինելու դեպքում փայտի վրա փաթաթված և նավթի մեջ թաթախված խծուծից կամ լաթերից պատրաստված վաւիղ ջահերով: Յերկարատե ձմեռ ու տեական մեծ սառնամանիքներ ունեցող շրջաններում լավ է ձեռքի նասոսներն ոժտել մշտական հատուկ ջեռուցիչներով:

Յերբեմն այնպէս է պատահում, վոր ձեռքի նասոսը հանկարծ դադարում է ջուր մատակարարելուց կամ թույլ կերպով է ջուր մատակարարում: Դրա պատճառն ամենից հաճախ հանդիսանում է հետևյալը. ընդունիչ ցանցը ջրի մեջ սուզված չի լինում կամ թե խցված է լինում տիղմով, մամուռով և այլն, ընդունիչ շլանգի պտուտակիչը լավ ամրացված չի լինում, փականները կեղտոտվել են, ընդունիչ շլանգը վնասված է: Նկատելով, վոր ընդունիչ ցանցի թեկուղ մի մասը ջրից դուրս է մնացել, անհրաժեշտ է անմիջապէս ընդունիչ շլանգը ցած իջեցնել այնպէս, վոր ցանցն ամբողջովին անցնի ջրի տակ: Հարկավոր է կեղտոտված ընդունիչ ցանցը ջրից հանել, լավ մաքրել և վորողել ու նորից ջրի տակ սուզել:

Ընդունիչ շլանգի թույլ պտուտակիչը պետք է պտուտակիչի բանալիով լավ ամրացնել: Յեթե այդ չի տգնում, պետք է նրան յետ պտտել, տակը խծուծ դնել և նորից ամուր փակել:

Փականները կեղտոտվելիս անհրաժեշտ է նրանց հանել, լվանալ և նորից տեղը դնել:

Ընդունիչ շլանգները վնասվում են տափակելուց և ծակվելուց: Սռաջին դեպքում վնասվածքը չտկելու համար շլանգի մեջ կլոր փայտ են մտցնում և փայտե թակով զգուշութամբ խփելով, վնասվածքը չտկում են. յերկրորդ դեպքում ծակված տեղը լաթով

մի քանի տակ ամուր փաթաթում են և ապա լաթի վրայից պարանի խիտ փաթաթոցով նրան պինդ կապում:

Ջրով հանգցնող և ջուր մատակարարող միջոցները գործի դնելու և ջուր տալու կարգն ու պայմանները յուրաքանչյուր առանձին դեպքում վորոշում է հրդեհաչեղ խմբի կամ հրդեհաչեղ բջիջի պետը, վորը նայած հրդեհի հանգամանքներին, կիրառում է ջրամատակարարման հետևյալ միջոցներից մեկն ու մեկը:

1. Ուղղակի ջրամատակարարում կիրառվում է այն դեպքում, յերբ ձեռքի հրչեջ նասոսի աշխատանքն ապահովված է խմբի կամ բջիջի տակառներով և տաղնապի դեպքում իր բնակչության տակառներով բերվող ջրով: Նմանապես ուղղակի ջրամատակարարում է տեղի ունենում այն ժամանակ, յերբ ձեռքի հրչեջ նասոսն աշխատանքի յե դրվում անմիջապես բնական կամ արհեստական ջրափոսի մոտ, յեթե վերջինս հրդեհի տեղից հեռու չի գտնվում:

Ջրի աղբյուրը հրդեհի տեղից բավական հեռու գտնվելու դեպքում ուղղակի ջրամատակարարման համար կարելի յե հաջողությամբ կիրառել մեխանիկական նասոսներ (մոտոպոմպ կամ ավտոնասոս), վորոնք ունեն մեծ արտադրողականություն և ջուրը մատակարարում են 200-300 մետր հեռավորության վրա:

2. Հաղորդիչ ջրամատակարարում է կիրառվում այն դեպքերում, յերբ ձեռքի հրդեհաչեջ նասոսը ջուր կրելու համար պարզվող շխնգներ կամ տակառներ չունի, կամ թե ջրի աղբյուրն այնքան հեռու յե գտնվում հրդեհի տեղից, վոր միմիայն ձեռքի կամ մեխանիկական նասոսը (մոտոպոմպ կամ ավտոնասոս) ի վիճակի չեն այդպիսի հեռավորության վրա ջուր մատակարարելու:

Շխնգներ կամ տակառներ չլինելու դեպքում պետք է նասոսին ձեռքով ջուր հասցնել դույլերով, վորի համար մարդիկ անընդհատ յերկու տակ չղթա յեն կողմում՝ ջրի աղբյուրից սկսած մինչև այնտեղ, վոր

տեղ դրված է ձեռքի նասոսը, ըստ վորում այն շարքում, վորտեղից դույլերն են տրվում, պետք է կանգնեցվեն մեծահասակ մարդիկ, իսկ այն շարքում, վորտեղից դատարկ դույլերն են վերադարձվում, պետք է կանգնեցվեն կանայք ու յերեխաները:

Մի քանի ձեռքի նասոս ունենալու դեպքում, ինչպես և յեթե խումբը կամ բջիջը մոտոպոմպ կամ ավտոնասոս ունեն, ջրի մատակարարումը կարելի յե կատարել փոխադրելով, այսինքն ջուրն ուղղակի ջրի աղբյուրից քաշել հրդեհի մոտ դրված տակառի կամ կիսատակառի մեջ, իսկ այդտեղից արդեն ուրիշ նասոսով տալ անմիջապես հրդեհին:

6. ՇԼԱՆԳԱՅԻՆ ԳԾԵՐԸ ՓՈԵԼԸ

Գոյություն ունի շխնգները փռելու չորս ձև՝ հորիզոնական, ուղղաձիգ, սողացող-ոճաձև և խառը:

Յերբ շխնգները փռվում են հարթ տարածության՝ գետնի կամ հատակի վրա, այդպիսի փռվածքը կոչվում է հորիզոնական:

Փռվածքն ուղղաձիգ է կոչվում այն դեպքում, յերբ շխնգը պատի ուղղությամբ բարձրանում է կտուրը, վերևի հարկի պատուհանը կամ ներսի սանդուխտի անցքի մեջ:

Թեք հարթությամբ, որինակ ներսի սանդուխտի ուղղությամբ փռված շխնգի գիծը կոչվում է սողացող-ոճաձև:

Յեվ վերջապես խառը փռվածք կոչվում է այնպիսի փռվածքը, վորն իրենից ներկայացնում է յերկու կամ յերեք փռվածքի միացում. որինակ, հորիզոնականը միանում է ուղղաձիգի հետ, հորիզոնականը՝ սողացող-ոճաձևի, հորիզոնականն ու ուղղաձիգը՝ սողացող-ոճաձևի հետ և այլն:

Յուրաքանչյուր պրոֆեսիոնալ հրդեհաչեջ խումբ կամ կամավոր բջիջ պետք է կառքերում ունենա այնպիսի քանակությամբ շխնգներ, վոր ապահովված լինի յեղած նասոսների հաջող աշխատանքը: Այդպիսի

դեպքում պետք է հաշվի առնել վոչ միայն հրդեհի նստոյաների անմիջական աշխատանքի համար անհրաժեշտ շլանգների քանակը, այլև վորոչ քանակութեամբ շլանգների պաշար՝ ջուրը մի տեղից մյուսը փոխադրելու և վնասված շլանգները փոխելու համար:

Շլանգային գիծը վորքան յերկար է, նրա ճնշման կորուստն այնքան մեծ է: Այդ պատճառով ել շլանգային գիծը պետք է տանել կարճ ճանապարհով և վորքան հնարավոր է՝ ուղիղ:

Վորպես կանոն, շլանգային գիծը պետք է տանել ճանապարհի, փողոցի, բակի կողքերից, վորքան հնարավոր է հրդեհի կառքերի անցուղարձի տեղերից հեռու:

Շլանգային գծերն անցկացնելիս պետք է հետևել, վոր շլանգները մեխերի, փշոված ապակու կտորների, խճերի վրա և այլն չընկնեն, ինչպես և տաք առարկաների վրայով չանցնեն, վորպեսզի չփչանան: Դրա համար չպետք է թույլ տալ, վոր շլանգները նավթամթերքների, զանազան թթու հեղուկների և այդպիսի հեղուկների խառնուրդներով լցված փոսերի մեջ ընկնեն:

Շլանգային գիծը ճանապարհի և փողոցի միջով չպետք է անցկացնել: Յեթե դրանից դժվար է խուսափել, անհրաժեշտ է շլանգները պատել շլանգային կամրջակներով, իսկ այդպիսիք չունենալու դեպքում շլանգների յերկու կողմից տախտակներ կամ բարակ ձողեր դնել:

Յեթե հարկավոր է շլանգն անցկացնել ցանկապատի վրայով, պատուհանից կամ շենքի կտուրը, նա անխուսափելիորեն ծալվում է: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է շլանգների տակ դնել շլանգային հատուկ թամբ, իսկ այդպիսին չլինելու դեպքում շլանգի տակ դնել կորացրած յերկաթաթիթեղի կտոր:

Շլանգային գծերը սանդուխքների վրայով անցկացնելիս շլանգները պետք է տանել պատի յերկարութեամբ, վորպեսզի շլանգները չծալվեն և անցուղարձը չխանգարվի:

Շլանգային գիծը յերկաթուղու գծով անցկացնելիս շլանգները պետք է տանել ռելասակալների արանքով:

Շլանգային գծեր անցկացնելու բոլոր դեպքերում պետք է հետևել, վոր շլանգները պտուտակաձև չփաթաթվեն (իրենց առանցքային գծի շուրջը չփաթաթվեն), վորովհետև այդ առաջ է բերում ջրի ճնշման մեծ կորուստ և նրա նետման ուժը պակասեցնում է:

Հրդեհաչեջ սանդուխքի վրայով տարված շլանգային գիծը չպետք է նրա վրա թողնել, վորպեսզի նրա վրա ջուր չթափվի, իսկ ձմեռ ժամանակ՝ վորպեսզի չսառչի:

Հենց վոր շլանգային գիծը կհասնի պատուհանին կամ տանիքին, անհրաժեշտ է սանդուխքի վրայից նրան վերցնել և մոտ 70 սանտիմետր հեռավորութեամբ մի կողմ տանել և ապա շլանգային բռնիչով ամրացնել:

Ձմեռվա խիստ սառնամանիքին շլանգների համար ձյան կամ սառույցի մեջ փորակներ (жолоб) են խփում, և շլանգները կամ ծայրահեղ դեպքում միմիայն միացնող պտուտակները ծածկում են ձյունով կամ զոմաղբով, վորպեսզի շլանգները չսառչեն: Շլանգային գիծն անցկացնելուց հետո՝ նրան աշխատեցնելու համար և նրա սառչելու դեպքում անհրաժեշտ է անցկացնել պահեստի գիծ:

Անհրաժեշտութեան դեպքում հրդեհի վրա վորքան հնարավոր է ավելի շատ ջուր ցանելու և քիչ շլանգներ գործադրելու համար անհրաժեշտ է արագորեն ջուր ցանելու նպատակով կիրառել ճյուղավորումներ, նախապատվություն տալով այդ շլանգներից նրանց, վորոնք ունեն փակովի ծորակներ:

Շլանգների բոլոր վնասված տեղերը պետք է քիմիական մատիտով նշան արվեն, իսկ դրված բռնիչները թղնվեն տեղերում, վորպեսզի կարկատելու համար լնասված տեղերը գտնելը հեշտ լինի:

Հրդեհի համար ոգտագործված շլանգները հավաքելիս անհրաժեշտ է նախապես բոլոր միացնող պտուտակները բացել և ապա յուրաքանչյուր շլանգը

յերկու տակ փաթաթել, վորից հետո շանգները պետք է դնել կառքերի մեջ աշնպես, վոր կարելի լինի մաքսիմալ արագությամբ նորից փռել:

Զմեռ ժամանակ շանգները չփշանալու համար հանձնարարվում է նրանց փաթաթել մեկ տակ:

Սառած շանգները պետք է տեղում տաք ջրով կակղացնել և դնել տեղափոխելու և փոխադրելու համար հարմար ձևով: Յեթե շանգներն աշխատանքի պայմանների համաձայն կակղացնելը հնարավոր չէ, այդ դեպքում դրանք առանց փաթաթելու պետք է սայլերի վրա դրած տուն տանել, շանգները պահաններով պնդացնելով, վորպեսզի նրանք չկտրվեն:

Հրդեհից տուն վերադառնալուց հետո գործածված շանգները պետք է անմիջապես փոխարինվեն պահեստի շանգներով, լվացվեն, չորացվեն և վնասվածները նորոգվեն:

7. ՓՈՂԱԿԱՎՈՐՆԵՐԻ (СТВОЛЬЩИК) ԱՇԽԱՏԱՆՔԸ

Այն հրդեհաչեղը, վորը մարտական հաշվի աղյուսակի համաձայն նշանակված է փողակով (բրանդոպոյտով) աշխատանք կատարելու, կոչվում է փողակավոր:

Նայած հրդեհի հանգամանքներին, փողակավորն աշխատում է պառկած, չոքած, կամ կանգնած ձևով:

Շատ հրդեհաչեղներ դեռևս ջրի հրդեհաչեղ ցայտի գործողության սկզբունքին ծանոթ չեն:

Հրդեհաչեղ ջրացայտն ամենից ուժեղ է իր մարտի միմիայն առաջին մասում, վորովհետև ցայտի այդ մասը ներկայացնում է իրենից միապարզ մի մասսա և ունի հարվածելու զգալի ուժ. ցայտի յերկրորդ մասի ուժը պակաս է, վորովհետև նա արդեն սկսում է ցլրվել և հետևապես իր ուժը վորոչ չափով կորցնում է. ցայտի յերրորդ մասն ամբողջովն փոշիանում է, վորի պատճառով էլ, կարելի չէ ասել, բոլորովին գորություն չի ունենում, վորովհետև դեռ կրակին չհասած՝ նա գոլորշիանում է և կրակի վրա վոչ մի ազդեցություն չի ունենում: Այստեղից էլ այն յեղ

րակացությանը պետք է դալ, վոր յուրաքանչյուր փողակավոր պետք է աշխատի ջրի ցայտը նետել մոտիկից և պետք է վորքան հնարավոր է կրակին մոտ դնա և ցայտն ուղղի դիմացը:

Յեթե դրան խանգարում է ճառագայթաշերմության գորությունը, փողակավորը պետք է ուժեղ բոցից ու տապից պաշտպանվի թաղիքից կամ աղբեստից պատրաստած վահանով և դեմքը պաշտպանի Վինկլերի քողով, ձեռքերը՝ ջրով նախապես թրջված բրդենտի ձեռնոցներով:

Աշխատելիս պետք է փողակը ձեռքով պահել աջ ազդրի մոտ, աջ ձեռքով բռնելով նրան կիսապտուտակիչի ցածից, շանգի միացման տեղում, իսկ ձախ ձեռքով՝ վորտեղից կատարվում է ջրի ցայտը, 32 աստիճան անկյան տակ:

Ճյուղավորումները պետք է դրվեն վորքան կարելի չէ հրդեհին մոտիկ, անվտանգ տեղում և վոչ յերբեք դարպասների մեջ, անց ու դարձի տեղերում կամ նրանց մոտիկ:

Հրդեհին մոտիկ փոված շանգային գծերին հըսկելու համար մարտական հաշվի աղյուսակի համաձայն պետք է նշանակել մի առանձին հրդեհաչեղ աշխատող, վորը պարտավոր է մոտն ունենալ պայուսակ, վորտեղ դրվում են բանալիները՝ պտուտակիչները քանդելու և ամրացնելու, շանգային բռնիչներն ու պտուտակիչներն ամրացնելու համար՝ տակը պահեստի նյութեր (ամրացնող ողերով), պարան, ալցան, պղնձալար և այլն դնելով:

Այդ հրդեհաչեղը շանգային գծերում վնասված տեղեր յերևան բերելու դեպքում պետք է անմիջապես միջոցներ ձեռք առնի նրանց կարգի բերելու, իսկ այն շանգները, վորոնք փռելու ժամանակ ընկել են այնպիսի տեղեր, վորտեղ նրանք կարող են վնասվել, նա պետք է այդպիսի տեղերից նրանց հեռացնի:

Ծակերի ու պատռվածքների վրա պետք է դրվեն բռնիչներ. խոշոր վնասվածքների դեպքում վոչ սար

քին չլանդը պետք է փոխել սարքին չլանդով, վորի համար անհրաժեշտ է նախապես դադարեցնել չլանդային գծին ջուր տալը:

Փողակավորն իր աշխատանքով պետք է.

1) անհրաժեշտ տեղում կրակը հանգցնելու համար ապահովի ջրի ցայտի հաջող գործողութունը.

2) պաշտպանի շենքերը, նրանց մասերն ու կառուցվածքները, վորոնց վտանգ է սպառնում կրակը.

3) ահամա նահանջի դեպքում ճանապարհն անվտանգ դարձնի:

Բացի դրանից հրդեհը հանգցնելու համար փողակավորը պետք է գիտենա հետևյալ հիմնական կանոնները.

1) չպետք է ջուրը «ծխի մեջ» լցնել առանց կրակը տեսնելու, վորովհետև հանգցնելու այդ միջոցն անուրուշտ է.

2) աշխատելու համար պետք է այնպիսի դիրք ընդունել, վոր լինի փոքր ինչ կողքից, շարունակ գնալ կրակի դեմ և թույլ չտալ, վոր նա շարունակի ծախալվել.

3) պետք է խուսափել ջրի ցայտն ուղղել հարկերի մեջ դետնից՝ պատուհանների ապակիներին, վորպեսզի նրանք չկտրտվեն և կրակին ողջ հասնի.

4) բոցը պետք է հանգցնել վերևից, վորովհետև ջուրը ցած թափվելիս կհանգցնի նայել ցածում վառվող առարկաները.

5) ցայտն առաջին հերթին պետք է ուղղել վառվող շենքի կամ առարկայի (սյուներ, գերաններ, հենափայտեր և այլն) հիմնական մասերին.

6) պետք է խուսափել ցայտն ուղղել խիստ կերպով տաքացած առարկաներին և ելեկտրատար անոթներին ու ելեկտրալարերին.

7) ջուրը պետք է ծախսել տնտեսաբար և առաջին հնարավորության դեպքում չլանդի մեծ տրամաչափի ջրացայտից ու ջրցանից անցնել փոքր չափի, հասնելով մինչև հիդրապուլտի կիրառմանը.

8) անհրաժեշտության դեպքում պետք է փողակից

շենքին մատակարարվող ջուրը ժամանակավորապես դադարեցնել և ջրացայտը շենքի միջից ուղղել դուրս:

Յեթե փողակավորը փողակը բռնել է անմիջապես վառվող շենքի պատուհանի մեջ, այդ դեպքում պետք է հիշի, վոր յեթե ջարդված պատուհանից դեղին-չափա-նակագույն ծուխ է դուրս գալիս, նշանակում է, վոր շենքի մեջ կրակն ողի պակասության պատճառով դետևս չի զարգացել: Այդպիսի դեպքում սպասելի չէ, վոր յեթե շենքի մեջ բավական քանակությամբ ողմտնի, կրակն իսկույն կզարգանա և բոցն ուժգին կերպով պատուհանից դուրս կգցի: Ուստի այրվածքներ ստանալուց խուսափելու համար փողակավորը դետնից աշխատելիս պետք է կիցի, իսկ հրդեհաչեջ սանդուխքի վրայից աշխատելիս՝ սանդուխքից մի քանի աստիճան ցած իջնի, այնպես վոր նրա գլուխը պատուհանի դոզից ցածր լինի:

Հենց վոր բոցն սկսի հանդարտել, փողակավորը պետք է վեր կենա և փողակով հանդերձ պատուհանից անցնի շենքի մեջ:

Փողակավորին հաճախ վիճակված է լինում աշխատել հրդեհաչեջ սանդուխքի վրա կանգնած: Այդպիսի դեպքում, վորպեսզի նրա ձեռքերն ազատ լինեն, և նա հնարավորություն ունենա փողակն ազատ կերպով դեկավարել, պետք է փրկիչ գոտու կեռով կառչի սանդուխքի աստիճանին:

Փողակավորը սանդուխքի վրա դիրք գրավելու համար չլանդի հետ միասին դրանով բարձրանալիս, պետք է չլանդն անց կացնի շենքի արանքով և գցի ձախ ուսի վրայով այնպես, վոր նա կախված լինի մեջքի վրա՝ ջրցանը դարձրած դեպի ցած:

Վորոշ դեպքերում շենքի վերևի հարկում կամ տանիքում դիրք գրավելու համար փողակը կարելի չէ վերև բարձրացնել պարանի ոգնությամբ, վորի համար փողակավորը նախապես բարձրանում է շենքի վերին հարկը կամ տանիքը և այդտեղից ցած է գցում այն պարանը, վորը հրդեհաչեջը կապում է չլանդի միաց-

նող պտուտակի և ջրցանի տակից և փողակը քաշում ե դեպի իրեն:

Դիրք գրավելուց հետո փողակավորը պետք ե շլան-
դախին դիծը բարձրացնի և իր մոտ պահի շլանդի վորոշ
պաշար (մոտավորապես 10 մետր), վորպեսզի կարելի
լինի փողակն ազատ կերպով մանեմը: Փողակի մա-
նեմը, վոր բղխում ե հրդեհի տակտիկական պաշ-
մաններից, իր դիրքի սահմաններում կատարում ե փո-
ղակավորն իր հայեցողությամբ կամ հրդեհաչեջ խմբի
(բջիջի) պետկազմի կամ հրդեհաչիջման գլխավոր դե-
կավարի ցուցմունքով:

Յեթե վառվող շենքին կից շենքերին վտանգ ե
սպառնում, փողակավորը ժամանակ առ ժամանակ
պետք ե այդ շենքերի վտանգի յենթակա մասերը թրջի:
Ամենից լավ ե այդ անել ցրիվ ջրցաններով:

Դրա համար փողակներ չլինելու դեպքում հաջողու-
թյամբ կարելի յե հրդրոպուլտ գործածել կամ նույնիսկ
ուղղակի ջուրը շաղ տալ դույլերով:

Փողակավորն իր դիրքը փոխել կարող ե միմիայն
հրդեհաչեջ խմբի (բջիջի) պետկազմի կամ հրդեհաչիջ-
ման գլխավոր դեկավարի թույլտվությամբ, այն ել
յեթե փողակի ոգտագործումը հրդեհի մի այլ տեղում
ավելի նպատակահարմար ե և արժեքավոր, յեթե հր-
դեհը հանգցնելու տակտիկական պլանը փոխվում ե. յե-
թե բացարձակ վտանգի հետևանքով փողակավորի թի-
կունքում կրակ յերևալու և ծավալվելու դեպքում, շեն-
քի մասերի ու կառուցվածքների քանդվելու հնարավո-
րության և այլ դեպքում, անհրաժեշտ ե նահանջել:

Յեթե գործածության մեջ են դրվում մի քանի փո-
ղակներ, փողակավորների հիմնական խնդիրն այն ե,
վոր ամենից առաջ բոցը հանգցնեն, կամ ինչպես ասում
են, ջրացայտով «սեվացնեն» շենքի վառվող մասերը և
վտանգի սպառնալիքի յենթակա հարևան շենքերը
պաշտպանեն: Բոցը հանգցնելուց հետո անհրաժեշտ ե
անցնել բուն հրդեհի հանգցնելուն, այսինքն սկսել մա-
րամասն կերպով առանձին առարկաների և վառվող
շենքի մասերի վրա ջուր լցնել:

Դրա համար, նայած հրդեհի հանգամանքներին,
կարելի յե ընտրել հետևյալ յերկու միջոցներից վորեւե
մեկը.

1) հրդեհը բոլոր կողմերից ջրացայտերով ընդգրկել
և, ջրապատող առարկաների կամ շենքի մասերի բոցը
հանգցնելով, աստիճանաբար մոտենալ հրդեհի կենտրո-
նին.

2) յեթե հրդեհի մեկ կողմից գոյություն ունի ա-
ղատ տարածություն, վորտեղ վառվելու բան չկա կամ
բրանդմաուերի, պատի, դետի և այլ ձևի արգելք գո-
յություն ունի, բոլոր ջրացայտներն ուղղել մեկ կող-
մից, վոր հակառակ ե արգելքին, դադարեցնել կրակի
տարածվելը և ապա աստիճանաբար շարժվել առաջ:

8. ԿԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԲԸ

Կացնավորների աշխատանքը կայանում ե նրանում,
վոր նրանք հրդեհը հանգցնելու պայմանների հա-
մեմատ քանդում ու մերկացնում են շենքերի և կառուց-
վածքների մասերն ու յինվածքները, ինչպես և առան-
ձին առարկաներ և նյութեր:

Կացնավորներն իրենց աշխատանքի համար ոգտվում
են լնդային (ЛОМОБОН) գործիքով, վորը կազմված
ե ունիվերսալ և լնդային կեռերից, լինգերից, քանդիչ-
ներից, հրդեհաչեջ և ատաղձագործական կացիններից,
ձեռքի սղոցներից և գայլիկոններից, սովորական ու
սաւյրային բահերից, յեղաններից, լնդային պարան-
ներից: Նրանք այդ լնդային գործիքի օգնությամբ
քանդում, բացում են տանիքները, քանդում են
առաստաղները, հատակները և պատերը, դռները և
այլն, վերացնելով այդպիսով այն խոչընդոտները, վո-
րոնք հրդեհը հանգցնելուն և մասնավորապես փողակա-
րոնք հրդեհը հանգցնելուն ե հանգիստանում: Կացնավորների
վորների արգելք են հանգիստանում: Կացնավորների
վրա պարտականություն ե դրվում փրկել նույնպես
մարդկանց և անասուններին: Բացի դրանից կացնավոր-
ներին ոգտագործում են հրդեհաչեջ սանդուխքները դնե-
լու գործում:

Տանիքները բացելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ ցուցումներով. ծղոտով և այլ նման տեսակի նյութերով ծածկված տանիքները պետք է բացել քանդիչ-ճանկերով, փոցխերով և յեղաններով, տանիքը քերելով դեպի ցած, սկսած կատարել: Գոնտով կամ սաշեղով պատրաստված տանիքը բացում են՝ գոնտը կամ տաշեղը քանդիչներով կամ կացիներով քերելով: Տախտակածածկ տանիքը բացելու համար նախ հարկավոր է պոկել յերկայնակի տախտակները, յուրաքանչյուր տախտակը պոկվում է առանձին-առանձին այն տեղերից, վոր տանիքի ամբողջ յերկարությամբ ամրացված է մեխերով: Յեթե տախտակները դրված են վերևից ներքև, յուրաքանչյուր տախտակը պոկում են այն տեղերից, վոր վերևից մինչև ներքև մեխերով ամրացված են:

Կղմինտրի տանիքները քանդում են ձեռքերով, առաջին կղմինտրը նախապես քանդելով կացնով:

Դիք տանիքների, ինչպես և ձմռանը սառած տանիքների վրա աշխատելիս, վայր չընկնելու համար անհրաժեշտ է զգուշություն պահպանել, վորի համար բարձրանալիս պետք է ձեռքերով տանիքի կարերից բռնել և այդպես զգուշությամբ բարձրանալ վերև-կատարը կամ ոգտվել տանիքի հատուկ սանդուխտով:

Յեթե հրդեհի պայմանների համեմատ տանիքը գազաթից հանգցնելը հնարավոր չէ, այդ արվում է կարնիզից փոքր ինչ վերևից, այն հաշվով, վոր տանիքի ջարդված տեղից չերդակին իջնող հրդեհաչեջի գոտին տանիքից մի փոքր ցածր լինի:

Յածր գտնվող հարկի կողմից առաստաղը քանդելիս, անհրաժեշտ է ամենից առաջ ծեփի բոլորտիքը քանդել, և յերբ առաստաղի ցածի կարը մերկացվի, հարկավոր է նրան պոկել քանդիչով կամ ունիվերսալ կեռով:

Վերի հարկի կողմից առաստաղը քանդելիս նախ բացում են հատակը, վերցնում են ծեփը կամ լցվածքը, թափում են հատակի վրա, հանում են ծածկը և ապա

լինգի գլխի հակառակ ծայրի հարվածներով քանդում են առաստաղի ցածի կարը: Առաստաղները գլխավորապես բացում են լինգերի ոգնությամբ: Դեհ համար նախապես բացում են պատերի պլինտուսը, ապա հանում են հատակի տախտակները: Այդ արվում է հետևյալ ձևով:

Լինգի սուր ծայրով ուժգին կերպով խփում են տախտակների արանքների կարին՝ այնտեղ, վորտեղ նրանք ամրացված են գերաններին, վորից հետո մեկ տախտակը գերանից պոկելով շուռ են տալիս: Հատակի մյուս տախտակները մեկը մյուսից հետո բարձրացվում են՝ նրանց տակը լինգ կամ քլունգ անցկացնելով այն տեղերում, վորտեղ տախտակները միացված են գերաններին: Յերբ ամբողջ չենք ընդգրկած կրակը հանգցվում է, շատ հաճախ կարիք է լինում ամբողջ փայտի պատերը քանդել, վորպեսզի կարելի լինի ներսում վառվելը դադարեցնել: Հրդեհաչեջներն այդ նպատակի համար ոգտվում են քանդիչներով, լիզի կեռերով, լինգերով, կացիներով: Փայտաչեն տների պատերը քանդում են վերևից ողակ-առ ողակ, յուրաքանչյուր ողակը կապանքներից ազատելով լինգերով: Յեթե պատը ծածկված է բարակ տախտակներով, վերջիններս նախապես պետք է պոկել:

Յցապատը կացիներով քանդելիս ամենից առաջ պետք է կտրել պսակի ցածի փորատը (паз), վորի մեջ մտնում են ցցերի ծայրերը և ապա ամբողջ պատից մեկը մյուսի հետևից ցցերը հանել: Դրանից հետո քանդիչով կամ լինգի կեռով պետք է քաշել վերևի պսակները պահող անկյունային սյուներից մեկը և զցել գետին և այդտեղ պսակները քանդել ու վերցնել:

Տախտակաչեն չենքերը քանդում են հասարակ ձևով: Պետք է յուրաքանչյուր տախտակը պոկել սյուներից, գերաններից և կապերից, վորոնց դրանք ամրացված են: Յերբ տախտակները և կապերն ամրացված են յերկու կողմից, պետք է արտաքին կարը պոկելուց հետո, պոկել ներսի կարը և քանդած նյութերը դնել մի կողմ: Յերբեմն նայած հրդեհի

պայմաններին, սկսում են քանդել առանձին կամ մի շարք շենքեր, սակայն այս մասին կխոսենք այն ժամանակ, յերբ կխոսենք հրդեհը մեկուսացնելու միջոցների մասին:

Չպետք է մոռանալ, վոր դիրքից ինքնակամ հեռանալը յերբեմն կարող է այնպիսի հետևանքներ ունենալ, վորոնք անուղղելի կլինեն և հրդեհը հանգցնելու ընդհանուր հաջողության վրա վատ կանդրադառնա: Ուստի հրդեհաչիջման գործում աշխատող յուրաքանչյուր կացնավոր պետք է հիշի, վոր ինքն իրավունք չունի, չնայած սպառնացող ամեն տեսակի վտանգին, իրեն հանձնարարված գործից հեռանալ՝ առանց իր ջոկի (ջոկատի) պետի հրդեհաչեջ խմբի (բջիջի) պետի կամ հրդեհաչիջման ավագ ղեկավարի թույլտվության:

Բացառություն թույլ տրվում է այն դեպքերում միայն, յերբ կացնավորի հեռացումը դիրքից բացաճախորեն նպաստում է իր առաջ դրած խնդրի արագ և հաջող կատարմանը, կամ յերբ կացնավորը թունավորվում է, վերք կամ այրվածք է ստանում, վորոնք անհնարին են դարձնում նրան այլևս շարքում մնալու:

Հրդեհաչիջման ամբողջ ընթացքում կացնավորները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն շենքերն ու գույքը վնասվելուց պաշտպանելու:

Թիթեղածածկ տանիքների վրայով անցնելիս և նրանց քանդելիս կացնավորները քանդվող յերկաթաթիթեղների նկատմամբ պետք է վարվեն խնամքով և լինգով կամ քլունգով նրանց չծակեն: Պետք է քանդել տանիքի այն տեղերը, վորոնք ցույց են տրված հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետկազմի անդամների կողմից և ոպերատիվ աշխատանքի ընթացքը պահանջում է: Շենքերը ներսից քանդելիս և նրանց մասերն ու կառուցվածքները մերկացնելիս շենքերում յեղած առարկաները և նյութերը չփչացնելու և չկեղտոտելու համար վերջիններս պետք է նախապես տանել հարևան շենքերը կամ պետք է միջոցներ ձեռք առնել այդ ա-

Սանդխավանդակի ու շենքի մեջ լցված ծուխը դատարկելու համար անհրաժեշտ է պատուհանները բացել և վոչ թե ապակիները ջարդել: Յեթե այդպես հնարավոր չէ, պետք է ջարդել սանդխավանդակի վերևի հարկի պատուհանների, իսկ շենքերի պատուհանների վերևի մասի ապակիները:

Հատակը բացելիս կացնավորները պետք է տախտակը ինայեն, նրանց չջարդեն և չձեղքեն, իսկ յեթե հնարավոր է, ավելի լավ է սղոցել:

Վառարանները քանդելիս չպետք է նրանց աղյուսները ցած չսլքտել, այլ պետք է զգուշութամբ դարսել, քանի վոր կարելի յե նրանց ոգտագործել տաքացման անոթների վերականգման համար:

Շենքերի մասերի և կառուցվածքների քանդելուց և մերկացնելուց ստացած նյութերն ու առարկաները տանիքներից, չերդակից կամ հարկերից ցած թափելիս անհրաժեշտ է.

1) ցած թափելու համար տեղ վորոշել, ազատելով այդ տեղը շլանգային գծերից, հրդեհաչեջ սանդուխքներից և հրդեհաչեջ այլ ինվենտարից.

2) թափելու տեղում հրդեհաչեջ կանգնեցնել մարդկանց դժբախտ պատահարներից զգուշացնելու համար:

3) ցած թափելիս ձայն տալ՝ «Զգուշացիր».

4) նյութերն ու առարկաները չթափել ելեկտրալարերի, ծածկերի, պատշգամբների և շենքի այն մասերի վրա, վորոնք յենթակա յեն վնասման:

Հրդեհաչեջ սանդուխքները հրդեհաչեջ խմբի կամ բջիջի համար հանդիսանում են իբրև խիստ պատասխանաբու ինվենտար: Դրանք ծառայում են մարդկանց փրկելու, հրդեհաչեջներին շենքերի վերին հարկերը և տանիքները բարձրացնելու ու շլանգային դժերը վեր հանելու համար: Սանդուխքները շենքի

վերին հարկերում կամ տանիքում աշխատող հրդեհա-
չեջներին համար ակամա նահանջի դեպքում հանդի-
սանում են իբրև անվտանգ ճանապարհ: Ուստի սան-
դուխքները դնելու համար այնպիսի տեղեր պետք է
ընտրել, վոր նրանք վառվելու վտանգի յենթակա
չլինեն և վոր նրանցով կատարվող յեւեւջը լինի հար-
մար և անվտանգ:

Սանդուխքը պատուհանի մեջ դնելիս պետք է
նրան զետեղել պատուհանի ձախ մասում այնպես, վոր
հարմարություն լինի աջ կողմից ազատ կերպով նրա
մեջ մտնել:

Սանդուխքը շենքի տանիքի վրա դնելիս անհրա-
ժեշտ է ընդունել իբրև կանոն, վոր այդպիսին ան-
պայման դրվի պատուհանների միջապատի վրա: Յեթե
հրդեհի հանգամանքները թույլ չեն տալիս, վոր
կտրանը, հրդեհաչեջ սանդուխքը դրվի պատուհանների
միջապատի վրա, այդպիսի դեպքում քարաչեն շենքի
հրդեհի ժամանակ նրան պետք է դնել սանդխավան-
դակի յետևը, իսկ բրանդմաուեր ունեցող փայտաչեն
շենքի հրդեհի ժամանակ՝ վերջինիս յետևը: Դրված
սանդուխքի թեքությունը պետք է լինի 75—60°, վոր-
պեսզի ավարիա չառաջանա: Չպետք է դրված հրդե-
հաչեջ սանդուխքները վերցնել առանց այդ մասին
վերևում աշխատող հրդեհաչեջներին հայտնելու:

9. ՀՐԴԵՀԻ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ

Յերբ հրդեհաչեջ խումբը կամ բջիջը չեն կարո-
ղանում արագ կերպով հրդեհի առաջն առնել, պետք
է պաշտպանողական դիրք գրավեն և բոլոր միջոց-
ները ձեռք առնեն կրակի տարածվելը սահմանափա-
կելու, այլ խոսքով պետք է հրդեհը մեկուսացնեն: Դրա
համար անհրաժեշտ է հրդեհաչեջ խմբի կամ բջիջի
տրամադրության տակ յեղած և հրդեհի վայրում մո-
բիլիզացիայի յենթարկված բոլոր ուժերով և մի-
ջոցներով կրակին դիմադրություն ցույց տալ:

Ամենից հաճախ այնպիսի հրդեհներ են հանդի-

պում, վոր կրակը շարժվում է մի ուղղությամբ.
ուղղակի քամու կողմը: Ուստի պետք է յեղած ուժերն
ու միջոցները դասավորել այնպես, վոր շարունակ կա-
րելի լինի գնալ կրակի դեմ:

Հրդեհն այդ ձևով մեկուսացնելու համար վոչ
մի հնարավորության առաջ չպետք է կանգ առնել:
Այդպիսի դեպքում միանգամայն ճիշտ կվարվի այն
պետք, վորը կողտադործի վոչ միայն իր հրդեհաչեջ
խմբի կամ բջիջի ջրով հանգցնելու միջոցները, այլև
կողտադործի հրդեհաչիջման այն լրացուցիչ միջոց-
ները, վոր իր տրամադրության տակ են դրված բնակ-
չության կողմից, ինչպիսիք են՝ ջուր կրելու տնային
տակառները և դույլերը՝ անմիջապես հարևան շեն-
քերը պաշտպանելու նպատակին ծառայեցնելու հա-
մար և այլն:

Հրդեհը մեկուսացնելու վերահիշյալ միջոցը յեր-
բեմն հաջողություն չի ունենում առանձնապես մեծ
հրդեհների ժամանակ, յերբ հրդեհաչիջման միջոց-
ները սահմանափակ են: Այդպիսի դեպքերում պետք
է ընդհատել կրակի շարժման ճանապարհը՝ նրա վրա-
յից բոլոր վառվող նյութերը հեռացնելով թույլ չտալ,
վոր կրակը տարածվի:

Այդ ընդհատումը կայանում է նրանում, վոր
կրակի տարածման ճանապարհի վրա կրակից քիչ հե-
ռու քանդում են մեկ կամ մի քանի շենք և շենքերից
ազատված այդ մասում պաշտպանության գիծ են
դնում:

Յերբ հրդեհը մեկուսացվում է, յերբ բավակա-
նաչափ պարզ է լինում, վոր կրակը դենը չի անցնի,
անհրաժեշտ է գրոհի անցնել, այսինքն գործադրու-
թյան մեջ դրված հրդեհաչեջ նասոսների բոլոր ջրացա-
տերն անմիջապես ուղղել կրակին, վորից հետո, նա-
յած հանգամանքներին, փողակավորների ընդարձակ
ճակատով անցնել ամբողջ հրդեհատեղը կամ թե ջրա-
ցայտերով բոլոր կողմերից նրան ընդգրկելով մոտե-
նալ հրդեհատեղի կենտրոնին: Այդպիսի գործողու-
թյունների կիրառումը կոչվում է հրդեհի լիկվիդա-
ցիա:

Յեթե վառվելը վերջնականապես դադարել է և նրա շարունակվելու կամ վերանորոգվելու հնարավորությունը վերացված է, հրդեհը կարելի չէ համարել լիկվիդացիայի յենթարկված:

10. ՀՐԴԵՀԱՏԵՂԸ ՔԱՆԴԵԼԸ, ԶՈՒՐ ՏԱԼԸ ՅԵՎ ՄԱՔՐԵԼԸ

Վառվելու հնարավորության առաջը պետք է առնել շենքերի վառված մասերն ու կառուցվածքները և առանձին առարկաներն ուշիուշով քանդելով, մերկացնելով ու վրան ջուր լցնելով, ինչպես և հրդեհի տեղերը զննելով:

Շենքերի վառված մասերն ու կառուցվածքները և առանձին առարկաներն ու նյութերը քանդում են այն դեպքերում, յերբ կասկած կա, թե սլաղի, կտրի, առաստաղի տակ և այլն կրակ կա, և շարունակում են քանդել, մինչև վոր հանդիպում են թաքմ ու չսեվացած նյութի: Լրացուցիչ կերպով քանդելու հետ միասին նաև ջուր են ցանում: Զուր ցանելու համար բացառապես պետք է կիրառել փոքր տրամաչափի շլանգներ և սրսկիչներ կամ հիդրոպուլտեր:

Յերբ պարզվում է, վոր հրդեհը լիկվիդացիայի չէ յենթարկված, անհրաժեշտ է հրդեհատեղը մաքրել: Դրա համար չվառվող բոլոր նյութերը (որինակ, տանիքի յերկաթաթիթեղը) պետք է դարձվեն մի կողմի վրա, իսկ բոլոր վառված գերանները, տախտակները, առարկաներն ու նյութերը և այլն՝ մյուս կողմի վրա, ըստ վորում վերջինները պետք է ջրով լավ թրջել:

Ներսի հրդեհները լիկվիդացիայի յենթարկելուց հետո անհրաժեշտ է մաքրել վոր միայն հրդեհատեղը, այլև հրդեհաչիջման ժամանակ շենքերի մեջ թափված ջուրը: Շենքերը քանդելու, մաքրելու և ջրելու միջոցին, վորպեսզի մարդկանց դժբախտություն չպատահի, պետք է նախապես պարզել, թե արդյո՞ք շենքի առանձին մասերում կամ կառուցվածքներում քանդվելու վտանգ չկա:

Ծխնելույզները քանդում են յերկու ձևով: Առաջին ձևն այն է, վոր մի քանի հրդեհաչեջ իրենց քանդիչները դեմ են անում խողովակի վերին մասին և քանդիչն ուժեղ կերպով սեղմելով խողովակը շուռ են տալիս իրենց հակառակ կողմը:

Յերկրորդ ձևն այն է, վոր խողովակը շուռ են տալիս պարանի միջոցով, վորն ամրացնում են խողովակի մեջտեղից: հրդեհաչեջները պարանի ծայրերից բռնելով և ուժգին թափով ցնցելով խողովակը յերկու կես են անում ու ցած թափում, ըստ վորում խողովակի ցածի մասը թափվում է հրդեհաչեջների կողմը, իսկ վերինին՝ հակառակ կողմը:

Քանդելուց, ջրելուց և մաքրելուց հետո կրկին անդամ անհրաժեշտ է լավ և մանրամասն զննության յենթարկել հրդեհատեղը՝ համոզվելու, վոր վառվելու հնարավորությունը միանգամայն վերացված է: Այն դեպքերում, յերբ այնուամենայնիվ դեռ վառվելու վտանգ կա, անհրաժեշտ է հրդեհի տեղում ավազի գլխավորությամբ սրտստ դնել: Այդպիսի պոստի մեծությունը և նրա տեխնիկական զինվածությունը վորոշում է հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետը հրդեհի հանգամանքների համեմատ:

Հրդեհի տեղում թողնված պոստը պարտավոր է հսկել հրդեհատեղի ամբողջ տերիտորիան և կրակ յերևալու դեպքում անմիջապես նրան հանդգնել: Պոստը հրդեհի տեղից հեռանում է միմիայն հրդեհաչեջ խմբի (բջիջի) պետի թույլտվությամբ և այն դեպքում, յերբ հրդեհաչեջն ուշիուշով զննելուց հետո համոզվում է, վոր կրակ առաջանալու ամեն մի հնարավորություն վերացած է:

11. ՀՐԴԵՀԱՇԵԶ ԽՄԲԻ ՀԱՎԱՔՎԵԼՆ ՈՒ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ

Հրդեհաչեջ խումբը կամ բջիջը հրդեհը հանդգնելուց հետո տուն վերադառնալու կարգադրություն տաճարով պետք է ամենակարճ ժամանակամիջոցում

հավաքի, ստուգման յենթարկի և խիստ կեղտոտ-
ված հրդեհաչեջ մմբողջ ինվենտարը մաքրի, վորը
հրդեհաչիջման պրոցեսում գործի մեջ ե դրված և
տեղավորի նրան կառքերի մեջ իր տեղը:

Հրդեհաչեջ նասոսի աշխատանքը վերջանալուց
հետո անհրաժեշտ ե հանել փոխող և ընդունիչ շլանգ-
ները և ջուրը նասոսից թափել: Դրա համար բաց են
անում ավտոնասոսի կամ մոտոպոմպի դատարկման
ծորակները: Ձեռքի նասոսով ջուրը դատարկում են՝
նասոսը դատարկ չարժելով, նրան մեկ ընդունիչ անց-
քի և մեկ դուրսթողման անցքի կողմը թեքելով:
Շլանգային գծերը հավաքելիս նրանք պետք ե կառ-
քերի վրա դրվեն աշնպես, վոր հարկ յեղած դեպքում
կարելի լինի նրանց մաքսիմալ արագությամբ նորից
փռել:

Հրդեհաչեջ ինվենտարը հավաքելուց հետո հրդե-
հաչեջ խումբը կամ բջիջը կառքերի մոտ շարվում են
նույն կարգով, ինչ վոր հրդեհի տեղը դալիս և ջո-
կերի պետերը կամ ջոկատների պետերն իրենց ջոկի-
րի անձնակազմը ստուգելուց հետո հրդեհաչեջ խմբի
կամ բջիջի պետին զեկուցում են մեկնելու մասին:

Յեթե պետն իր ստորաբաժանման անձնակազմն
ստուգելիս պարզի, վոր հրդեհաչեջներից մեկն ու
մեկը բացակայում ե, այդ մասին նա պետք ե անմի-
ջապես հաղորդի հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետին,
իսկ վերջինս, յեթե դժբախտ դեպք առաջանալու
վտանգ կա, պետք ե միջոցներ ձեռք առնի ոգնություն
հասցնելու:

Հրդեհաչեջ խումբը կամ բջիջը պետք ե հրդեհաչեջ
դեպոն վերադառնան քայլով կամ ծանր վարդով (рысь)
կառքերի միջև պահպանելով 10 մետր հեռավորու-
թյուն:

Հրդեհից վերադարձող ավտոմեքենաները պետք ե

չարժվեն մեկ ժամում 20 կիլոմետրից վոչ արագ, մե-
քենաների միջև պահելով 20 մետր հեռավորություն:
Ձմռանը յեվ խիստ սառնամանիքներին հանձնարարվում
ե, վոր հրդեհաչեջ խմբի կամ բջիջի անձնակազմը
հրդեհից վերադառնա քայլելով, վորպեսզի չմրսի:
Տուն վերադառնալուց հետո, չնայած հրդեհում աշխա-
տողների հոգնածությանը, հրդեհի վայրը մեկնած բո-
լոր կառքերը, ինչպես և հրդեհաչիջման ժամանակ
դորձածված տեխնիկական մմբողջ սպառազինու-
թյունը պետք ե անմիջապես լիակատար մարտական
դրության բերվեն, վորպեսզի նոր տազնապի ժամանակ
պատրաստ լինեն մեկնելու: Դրանից հետո պետք ե
թույլ տալ, վոր հրդեհաչեջները հանգստանան:

12. ՀՐԱՄԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՐԴԵ-
ՀԻ ԺԱՄԱՆԱԿ. ՄԻ ՔԱՆԻ ՀՐԴԵՀԱՇԵՋ ԽՄԲԵՐԻ ԿԱՄ
ԲՋԻՋՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԻԱԺԱ-
ՄԱՆԱԿ ԱՇԽԱՏԵԼԻՍ

Հետախուզություն կատարելիս և հրդեհաչիջման
պլանը կազմելուց հետո, հրդեհաչեջ խմբի կամ բջիջի
պետը համապատասխան հրամաններ ե արձակում իր
տրամադրության տակ յեղած ուժերն ու միջոցները ծա-
վալելու, իսկ հարկ յեղած դեպքում կարգադրում ե
նոր ոգնականներ կանչելու:

Հրամանները պետք ե արվեն կարճ, պարզ ու ճիշտ
յեվ պետք ե լինեն խիստ հետեվողական յեվ մեկը
մյուսին չհակասող: Բոլոր անհրաժեշտ հրամանները
տալիս ե աշն պետը, վորի վրա դրված ե հրդեհը հանգ-
ցնելու ընդհանուր ղեկավարությունը, նա պետք ե հսկի
այդ հրամանների ճիշտ կատարմանը յեվ հարկ յեղած
դեպքերում կատարված սխալներն ուղղի:

Միանգամայն անթույլատրելի յե, վոր պետն ան-
ձամբ ձեռնամուխ լինի թույլ տրված սխալներն ուղղե-
լուն, աշնինքն աշխատել սկսի իրրեվ կացնավոր կամ
փողակավոր: Պետի այդ ձեվի վարմունքը մարտական
հաշվի աղյուսակի հետ համեմատած՝ նշանակված հա-

մարներն աշխատանքի մեջ առաջ կբերի քայքայում: Միմիայն բացառիկ դեպքերում, յերբ հարկավոր է, վոր պետն անձնակաւն որինակով իր հետեից խումբը կամ բջիջը տանի, կարող է կատարել մարտական հաշվի վորյեմէ համարի պարտականություն: Սակայն հենց վոր այդ անհրաժեշտությունն անցնում է, պետն անմիջապէս վերադառնում է ընդհանուր ղեկավարման իր ուղղակի պարտականություններն կատարմանը:

Հաճախ հրդեհին ներկա գտնվող կողմնակի քաղաքացիները հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետին հրդեհը հանգցնելու ցուցումներ են տալիս: Այդպիսի դեպքերում պետը պետք է հանդիստ և քաղաքավարի կերպով լսի այդ ցուցումները, ստուգի և յեթե այդ ցուցումները խելացի լինեն, ոգտողործի: Հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետը հրդեհաչիջման գործը ղեկավարելիս պետք է հաստատապէս հիշի, վոր միանձնյա ղեկավարության հիման վրա նրան լիակատար իրավունք է տրված ոպերատիվ գործողությունները ղեկավարելու այնպէս, ինչպէս վոր տվյալ պայմաններում նա ավելի ճիշտ յեմ նպատակահարմար կգտնի: Պետը հրդեհի ժամանակ, վորքան հնարավոր է, պետք է աշխատի գտնվել միենույն տեղում, վորտեղից նրան հարմար է հետեւել կրակը հանգցնելու ընթացքին: Շարքային հրդեհաչեջներին մեկը պետք է լինի պետի մոտ՝ հրդեհաչեջ խմբի կամ բջիջի հետ կապ պահպանելու համար:

Այս բոլորից այն չի հետեւում, թե պետը պետք է շարունակ նույն տեղում կանգնի: Նայած անհրաժեշտությանը նա պետք է ժամանակ առ ժամանակ այցելի մարտական առանձին տեղամասերը՝ համապատասխան ցուցումներ տալու, վորպեսզի ամեն մեկը գիտենա, թե հարկ յեղած դեպքում վորտեղ կարելի յէ նրան գտնել:

Հրդեհը հաջող կերպով հանգցնելու գործում չափազանց եյական դեր է խաղում այդ ժամանակ թիկունքը ճիշտ կերպով յեմ ժամանակին կազմակերպելը: Թիկունքի սահմանները վորոշվում են հրդեհի մեծության յեմ հանգամանքների համեմատ: Իրրեմ կանոն,

Թիկունքի սահմաններն են համարվում՝ ավտոնատոներով յեմ մոտոպոմպերով գործելիս ճյուղավորությունների հաստատման գծերը, ձեռքի նասոսներով գործելիս՝ հրդեհի տեղին ջուր հասցնելու նասոսների հաստատման գծերը: Հրդեհի թիկունքի կազմակերպման համար յուրաքանչյուր հրդեհաչեջ խմբում կամ բջիջում մարտական հաշվի աղյուսակի համաձայն պետք է նշանակվի թիկունքի պետ: Գյուղական հրդեհաչեջ կազմակերպություններում համեմատաբար փոքր անձնակազմ լինելու հետեւանքով թիկունքի պետի պարտականությունների կատարումը կարելի յէ դնել հրդեհաչեջ խմբի ջոկերի պետերից կամ բջիջի ջոկատների պետերից մեկի վրա:

Թիկունքի պետի պարտականություններն են. կազմակերպել հրդեհի տեղը ջուր մատակարարելու գործը, ձեռքի նասոսները բաց անելու համար նրանց բանվորական ուժ հասցնել, շլանգային գծերի վրա հսկողություն սահմանել և ժամանակին միջոցներ ձեռք առնել վնասված շլանգները նորոգելու և փոխելու, հրդեհաչեջ խմբի կամ բջիջի ոպերատիվ գործողությունների շրջանում ղեկավարել սայլերի շարժումները, հրդեհի տեղի և փրկված գույքի պահպանությունը կարգավորել, սանիտարական ոգնություն կազմակերպել և այլն:

Հրդեհում յերկու յեմ ավելի հրդեհաչեջ խումբ կամ բջիջ աշխատելու դեպքում թիկունքի պետի պարտականությունները դրվում են տեղական հրդեհաչեջ կազմակերպության պետի վրա, իսկ բնակելի վայրում իր հրդեհաչեջ խումբը կամ բջիջը շունենալու դեպքում այդ պարտականությունները դրվում են առաջինը կազմակերպությունից հետո տեղ հագած հրդեհաչեջ կազմակերպության պետի վրա: Այդպիսի դեպքերում հրդեհաչեջ խմբի կամ բջիջի, իսկ այդպիսիների բացակայության դեպքում, ամենից առաջ տեղ հասած խմբի կամ բջիջի պետի կողմից թիկունքի պետին ագնելու համար պետք է նշանակվի մարտական հաշվի հրդեհաչեջներին մեկը: Ոգնության հասած հրդեհաչեջ

առաջինը հրդեհի տեղը հասած հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետի ձեռք առած միջոցների մասին գեկուցում լսելուց հետո, պետք է անձամբ ծանոթանա հրդեհի հանգամանքներին և ուժերի բաշխմանը, պետք է մարտական տեղամասեր նշանակի և վորոշի ու պարտիվ գործողությունների վերջնական պլանը:

Մարտական տեղամասերի քանակը նշանակելուց հետո հրդեհաչիջման ավագ ղեկավարը մարտական տեղամասերի պետեր է նշանակում հրդեհի տեղը հասած հրդեհաչեջ խմբերի բջիջների պետերից և նրանց ոգնականներից և տեղեկություն է տալիս հրդեհի ընդհանուր հանգամանքների, տեղամասի առանձնահատկությունների և տեղամասում լուծման յենթակա խնդիրների մասին:

Մարտական տեղամասի պետերն իրենց ստորաբաժանումների աշխատանքը ղեկավարելիս պետք է հարևան մարտական տեղամասերի հետ կապ պահպանեն: Հրդեհաչիջման ավագ ղեկավարը մարտական տեղամասերի և թիկունքի հետ կապ է պահպանում հրդեհի տեղը հասած յուրաքանչյուր հրդեհաչեջ խմբից կամ բջիջից առանձնացված հետևակ և ձիավոր կապավորների միջոցով հնչունական ազդանշանների ոգնությամբ:

Պետերն իրավունք չունեն առանց ավագ պետի կարգադրության իրենց ղեկավարության տակ գտնվող ստորաբաժանումներով հանդերձ վերջիններիս կողմից գրաված դիրքերից հեռանալու կամ այլ դիրքեր անցնելու:

Թույլատրվում է նահանջել թյն դեպքում միայն, յենթե դիրքից հեռանալն ու մարտական տեղամասի սահմաններում մի այլ դիրքի անցնելը բացարձակորեն նպաստում է ստորաբաժանման առաջ դրված խնդրի արագ լուծմանը, կամ այնպիսի հանգամանքներ են ստեղծվել, վորոնք ստորաբաժանման կյանքին վտանգ են սպառնում:

Իր ստորաբաժանման կողմից մեկ դիրքից մյուսը կատարվող ակամա նահանջի մասին պետը պարտավոր

է անհապաղ հաղորդել մարտական տեղամասի պետին կամ հրդեհաչիջման ավագ ղեկավարին և իր ունեցած հնարավոր միջոցներով տեղեկություն տալ կից ստորաբաժանումների պետերին, վորոնք պարտավոր են առանց իրենց մարտական աշխատանքին վնասելու նահանջողներին ոգնություն հասցնել:

Նահանջող ստորաբաժանման պետը նահանջի ճանահարներ, միջոցներ և հերթականություն սահմանելուց հետո պետք է անձամբ ղեկավարի նահանջի ընթացքը և պարտավոր է դիրքից հեռանալ ամենից վերջը:

Հրդեհը հաջողությամբ հանգցնելու պարտավորություն է վերցնում իր վրա վոչ միայն ընդհանուր ղեկավարություն ցույց տվող պետը, այլև հրդեհի վայրը յեկած մյուս հրդեհաչեջ խմբերի կամ բջիջների պետերը:

Կարգադրություններ անելու և այդ կարգադրությունները կատարելու ժամանակ տեղի ունեցող բոլոր տեսակի թյուրիմացությունները պետք է վերացվեն հրդեհաչիջմանը մասնակցող խմբերի կամ բջիջների պետերի փոխադարձ համաձայնությամբ:

Բոլոր պետերի գործողությունները պետք է հարմարեցվեն և ուղղված լինեն մեկ ընդհանուր նպատակի—վորքան կարելի յե ավելի շուտ լիկվիդացիայի յենթարկել հրդեհը, ըստ վորում նրանք պետք է միայնց ամեն տեսակի աջակցություն ցույց տան՝ առաջադրված խնդրն ավելի հաջող կերպով կատարելու համար:

Առաջին մարտական տեղամասերում հրդեհը լիկվիդացիայի յենթարկելուց հետո ազատված հրդեհաչեջ կազմակերպությունները, նրանց ջոկերն ու ջոկատները և նույնիսկ առանձին հրդեհաչեջ կառքերն անմիջապես արձակվում են տուն: Չպետք է առանց հատուկ անհրաժեշտության հրդեհաչեջ խմբերին կամ բջիջներին ու նրաց ջոկերին ու ջոկատներին սլահել հրդեհի տեղում:

Տեղական հրդեհաչեջ խումբը կամ բջիջը, իսկ

նրանց բացակայութեան դեպքում ամենից առաջ տեղ հասած խումբը կամ բջիջը հրդեհի տեղից հեռանում են ամենից վերջը:

13. ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԴԵՀԱՇԽԶՄԱՆԸ

Պարզված է, Վոր մի շարք գյուղերում յուրաքանչյուր կուտնտեսականի և մենատնտեսի վրա պարտավորութուն է դրված մշտապես մոտը պատրաստ ունենալ հրդեհաչեջ վորեւե գործիք (լինգ, կացին, քանդիչ, յեղան, դույլ), վորով տագնապի դեպքում նրանք պարտավոր են ներկայանալ հրդեհի տեղը և մասնակցել հրդեհաչիջման աշխատանքներին:

Այդպիսի գործիքներով հրդեհի տեղը հասած բոլոր քաղաքացիները պետք է ներկայանան հրդեհաչիջման ղեկավարին: Ղեկավարը տեղ հասածներից խմբակներ է կազմում և ուղարկում առանձին մարտական տեղամասերը, վորտեղ այդ խմբակները տեղամասի պետի տրամադրութեան տակ անցնելով, աշխատում են նրա ցուցումներով:

Նայած հրդեհի հանգամանքներին հրդեհաչիջման ավագ ղեկավարը կարող է նույնպես քաղաքացիներից առանձին խմբեր կազմել և ուղարկել այն հրդեհաչեջ պետերի տրամադրութեան տակ, վորոնց ղեկավարութեամբ կատարվում են այնպիսի աշխատանքներ, ինչպիսին հանդիսանում են, որինակ, գույքը փրկելը, հրդեհի ընդհատման համար շենքեր քանդելը, նասոսներ բանեցնելը, նասոսներին դույլերով ջուր մատակարարելը, տեղից տեղ թռչող կրակին հսկելը, առաջացող հրդեհների ոջախները հանգցնելը և այլն:

Հրդեհը հանգցնելու գործում տնտեսատեր-տնտեսները շատ փորձ չունեն, դրա համար պետք է հետեւել, վոր նրանք հրդեհչիջման ժամանակ աշխատեն կազմակերպված ձևով, սուս ու փուս, առանց տե՛ն կազմակերպված ձևով, սուս ու փուս, առանց չփոթվելու, կատարելով իրենց հանձնարարված աշխատանքները:

Քաղաքացիների խմբակն իր առաջադրանքը կատարելուց հետո չպետք է հեռանա իրեն հանձնած աշխատանքի տեղամասից, առանց այն պետի թույլտվութեան, վորի տրամադրութեան տակ ուղարկվել են: Ղեկավարն աշխատանքն ավարտելու մասին ղեկուցում է իր ավագին և, նայած ստացված ցուցումներին, խումբն ուղարկում է աշխատելու մի այլ տեղամաս կամ քաղաքացիներին արձակում է տուն:

14. ՀՐԴԵՀՆԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐ Մուրը վառվելը

Յեթե ծխնելույզները (վառարանների, պլիտաների խողովակները և այլն) յերկար ժամանակ բոլորովին մաքրված չեն կամ վատ են մաքրված, նրանց պատերին մրի բավական հաստ շերտ է նստում, վորը բաղկացած է վառելիքի վատ այրումից ստացված մասնիկներից և վառելիքի մեջ պարունակված մագնիսնյութերից:

Յերբ այդ պատերին շատ մուր է կուտակվում և կրակի բոցն առնում է նրան, նա վայրկյանապես վառվում է: Մուրն այրվելիս սովորաբար խողովակից կայծեր և նույնիսկ բոց է դուրս թռչում:

Յեթե ծխնելույզները ճիշտ են պատրաստված, մուր և սարքին են, մրի վառվելը վտանգավոր չէ: Այդպիսի դեպքերում պետք է թույլ տալ, վոր կանչված հրդեհաչեջների հսկողութեան տակ նա վառվի, վորոնք պետք է գնեն, թե արդյո՞ք ծխնելույզը սարքին է և միջոցներ ձեռք առնեն, վոր վառվող կայծերից հրդեհ չառաջանա:

Յերբեք չպետք է ծխնելույզի մեջ ջուր լցնել և վորեւե բանով խողովակի արտաքին անցքը կաշնել, վորովհետեւ առաջին դեպքում նրա չիկացած աղյուսե պատերը կարող են ձեղքեր տալ, իսկ յերկրորդ դեպքում կրակը վառարանի հրանցքով կամ ողանցքներով կարող է դուրս գալ շենքի մեջ ու վառել նրանց մեջ յեղած առարկաները, նյութերը և այլն:

Յեթե ծխնելու յգնեցեալսն վնասվածքներ են հայտնաբերված, վորոնք կարող են շենքի փայտե առանձին մասերը վառել, վառվելու վտանգից զգուշանալու համար անհրաժեշտ է այդ տեղերում հրդեհաչեջներ դնել, ապա դադարեցնել մրի վառվելը, ցածի ողանցքներն ու փականները ծածկելով ափսոս, վոր խողովակի մեջ ցածից ողը չանցնի:

Հրդեհը չերդակներում

Չերդակի հրդեհի ժամանակ առաջին խնդիրն է կրակի տարածվելու առաջն առնել, ապա պետք է միջոցներ ձեռք առնել չերդակի շենքի վառվող մասերն ու կառուցվածքներն անմիջապես հանգցնելու: Դրա համար անհրաժեշտ է փողակը չերդակին ուղղել ցածից՝ տան ներսի սանդուխքի վրայով և նրա գրոհին ոտանդակել վերևից, հրդեհաչեջ դնովի սանդուխքով տանիքը բարձրացրած փողակով:

Հրդեհաչիջման լիկվիդացիայի համար անհրաժեշտ փողակների ընդհանուր քանակը յուրաքանչյուր առանձին դեպքում վորոշում է հրդեհաչիջման դեկավարը՝ նայած հրդեհի հանդամանքներին և կրակի տարածման պայմաններին:

Կրակը հեշտությամբ կարող է տարածվել ամբողջ չերդակում ողի ուժեղ հոսանք առաջանալու հետևանքով: Ուստի դեկավարը պետք է աշխատի վորքան կարելի յե դրությունը շուտ գնահատման յենթարկել և ցույց տալ փողակների գրավելիք դիրքը: Իր հերթին հրդեհաչեջ խումբը (բջիջը) հրդեհաչիջման միջոցները ծավալելիս պետք է աշխատի վորքան հնարավոր է արագ կերպով գործել:

Չերդակի հրդեհը հանգցնելու ժամանակ անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1) չպետք է տանիքը բացել, քանի դեռ փողակները վերև չեն տարվել և քանի դեռ ջրացայտը պատրաստ չէ.

2) տանիքը պետք է բացել առջևից՝ սկսելով շենքի կատարից, այրվող տեղից քիչ հեռու տարածության վրա, սակայն նրանից վոչ այնքան հեռու.

3) չպետք է տանիքը բացել, յեթե նա այրվել է կամ քանդվելու վտանգ կա.

4) ահամա նահանջի համար պետք է յետևի կողմից ունենալ ազատ և անվտանգ ճանապարհ, դեպի այն դնովի հրդեհաչեջ սանդուխքը, վորով հրդեհաչեջները բարձրացել են տանիքը.

5) տանիքում աշխատող հրդեհաչեջներն ինքնափրկության համար պետք է ունենան փրկիչ պարաններ և կեռերով գոտիներ:

Տանիքները բացելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ծխնելու յգնեցեալսն և յեթե պարզվի, վոր ծպեղների (стропило) և կավարամածի (обрешина) տատանվելու հետևանքով նրանք հուսալի կերպով կանգնած չեն և հանկարծակի կերպով ընկնելով պարող են աշխատողներին դժբախտություն պատճառել, դրանց անմիջապես պետք է շուտ տալ ցած և վորքան հնարավոր է դեպի շենքի դրսի կողմը:

Տանիքի անհրաժեշտ մասը բացելուց հետո փողակավորները պետք է իջնեն չերդակը և կրակը հանգցնելով աստիճանաբար առաջ շարժվեն դեպի դիմացի փողովակույրը, վորը կրակի վրա գրոհում է ցածից տան ներսի սանդուխքով:

Չերդակում աշխատելիս անհրաժեշտ է հետևել, վոր փողակավորներն ավելորդ ջուր չգործածեն, վոր պետքի ցածի հարկերը ջրից չփչանան: Այդ պատճառով էլ, հենց վոր բոցը հանգցվում է, մեծ տրամաշարի շլանգներից ու սրսկիչներից պետք է անցնել փոքրերին, մինչև իսկ՝ հիդրոպուլտերին:

Յեթե կրակ չի յերևում, իսկ չերդակը լցված է ծխով, կարելի յե յենթադրել, վոր ծածուկ այրում է տեղի ունենում, այսինքն հրդեհն առաջացել է չերդակի ծածկի մեջ: Այդպիսի դեպքերում առաջին հերթին անհրաժեշտ է հրդեհի ոջախը վորոնել ծխնելու յգնեցեալսն, վորտեղ կարող են վառված լինել առանների մոտ, վորտեղ կարող են վառված լինել (накат): Խաղի գերանները կամ հեծանածածկը (накат): Վառվելու տեղը հայտնաբերելուց հետո անհրաժեշտ է ամենից առաջ վերցնել նրա լցվածքն ու առա-

տաղի ծեփը և ապա հիդրոպուլտի կամ դույլի միջոցով հրդեհը հանգցնել:

Յեթե չերդակում խիստ կերպով լցված ծուխը հնարավորություն չի տալիս աշխատելու, այդ դեպքում անհրաժեշտ է տանիքի մի մասը տան կատարին՝ ծխնելույզի մոտ բացել, վորպեսզի ծուխը դուրս գնա:

Հրդեհը ներսում

Բնակելի շենքերի հարկերում տեղի ունեցած հրդեհների ժամանակ, յերբ շենքերն իրենք բռնված են կրակով, առաջին հերթին անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել կրակի տարածման առաջն առնելու, վորը պատերի մեջ յեղած զանազան անցքերից, փայտե քաշող արանքներից և այլն կարող է անցնել վերևի և ներքևի հարկերը, հարևան շենքերը յեզ չերդակը:

Ապահովելով այդ մանեվրը, փողակները համապատասխան ձևով բաշխելով, իսկ այդպիսիք չլինելու դեպքում հիդրոպուլտների կամ նույնիսկ ջրով լցված դույլերի բաշխումով, անհրաժեշտ է այնուհետև հարձակում կատարել այնպես, վոր փողակավորներն առաջ շարժվելով, աստիճանաբար մոտենան հրդեհի կենտրոնին: Միաժամանակ անհրաժեշտ է հրդեհաչեջներին ուղարկել վառվող հարկերի վերևի և ներքևի հարկերը նրանց պատերը, հատակները, առաստաղը և հեծանածածկը (накат) գննելու, իսկ յեթե կրակով բռնված է վերևի հարկը, պետք է ուղարկել ցածի շենքերը և չերդակները: Այն տեղերում, վորտեղ վառվող կամ խիստ տաքացած տեղեր են հայտնաբերված, անհրաժեշտ է քանդել և վրան ջուր լցնել:

Բնակելի փայտե շենքերի ներսը հրդեհ առաջանալու դեպքում կրակն առանձնապես արագ կերպով տարածվում է սանդխավանդակներում և արտաքնոցներում. ուստի առաջին ջրացայտերը պետք է ուղղել հենց այդ տեղերը:

Այն դեպքերում, յերբ կրակ չի յերևում, սակայն

շենքերը ծխով լցված են, պետք է յենթադրել, վոր հրդեհն առաջացել է առաստաղի, պատի վորևէ տեղում կամ հատակի տակ:

Վառվելու տեղը պարզելու համար հրդեհաչեջներին պետք է ուղարկել հարկերը և չերդակը, ուր անհրաժեշտ է մանրամասն հետախուզություն կատարել: Հրդեհի ոջախը մեծ մասամբ գտնել կարելի յե վառարանների, պլիտաների ու ծխնելույզների մոտ, լամպաների, լապտերների և այլն տեղերում պատերը, հատակները և առաստաղները շոշափելու միջոցով և այլն:

Յեթե սաստիկ ծուխը հետախուզությանը խանգարում է, անհրաժեշտ է դռներն ու պատուհանները բաց անել: Այդպիսի դեպքերում ապակիները չպետք է ջարդել:

Հենց վոր վառվելու տեղը հայտնաբերվի, անհրաժեշտ է անմիջապես դռներն ու պատուհանները ծածկել, վորպեսզի վառվող շենքի մեջ ողի տեղափոխուկթյուն ու հոսանք չառաջանա և պետք է շենքի անհրաժեշտ մասերն ու կառուցվածքները քանդել. այնուհետև պետք է անցնել կրակը հանգցնելու աշխատանքին, վորի համար պետք է նախապես փողակը պատրաստ լինի ջուր տալու:

Յեթե սաստիկ ծխի պատճառով հնարավոր չե հրդեհը հանգցնել, կարելի յե ժամանակ առ ժամանակ գուռն ու պատուհանը բաց անել:

Չպետք է հրդեհաչեջների ամբողջ կազմը գործի մեջ քաշել, այլ՝ միմիայն նրա մի մասը, վորպեսզի հնարավոր լինի հոգնելու դեպքում միմյանց փոխադաշնվող գույքը:

Շենքերի ներսում հրդեհը հանգցնելիս ջրից պետք է ոգտվել չափազանց զգույշ կերպով, քանի վոր ջուրն իզուր և աննպատակ կերպով թափելը վոչ միայն անողուտ է, այլև փչացնում է շենքն ու նրա մեջ գտնվող գույքը:

Հաճախ պատահում է, վոր հրդեհաչեջները ջրացայտերի անփույթ գործողությամբ ավելի շատ վնաս

առատորեն ջուր ցանեն: Վորոշ դեպքերում, մանա-
վանդ ջրացայտ չլինելու ժամանակ, պետք է անցնել
առանձին շեղջերի քանդելուն, վորպեսզի կարելի լինի
դրանով կրակի տարածվելն ընդհատել:

Վառվող շեղջերը պետք է հանգցնել վերից սկսած,
նրանց վրա բոլոր կողմերից ուժեղ ջրացայտեր բաց
թողնելով, վորոնց պետք է ուղղել դիմացն այնպես,
վոր ջուրը թափվի շեղջի խորն անցքերի մեջ:

Հենց վոր կրակը հանգցվի, պետք է անմիջապես
սկսել վառվող շեղջերը քանդել, մանրամասն և առատ
կերպով ջուր ցանելով ցրիվ տված փայտի վրա:

Վառվող շեղջերը քանդելիս, անհրաժեշտ է հե-
տևել, վոր վառված շեղջերը չքանդվեն և մարդկանց
դժբախտություն չպատճառեն: Յեթե այդպիսի
սպառնալիք գոյություն ունի, ներկա յեղող պետերից
մեկը պետք է նախապես միջոցներ ձեռք առնի աշխա-
տողների անվտանգությունն ապահովելու համար:

Չպետք է աչքաթող անել այն հանգամանքը, վոր
փայտի պահեստների մեջ հրդեհների ժամանակ, ողի
ջերմաստիճանն արագորեն փոխվելու հետևանքով,
վառվելու տեղում կարող են առաջանալ մրրիկներ,
վորոնց ուժգին վառվող փայտի կտորները բավական
մեծ տարածությամբ բարձրանում են ողի մեջ, և
այդ կտորտանքն ընկնելու տեղերում կարող են նոր
հրդեհներ առաջանալ:

Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է տե-
ղից տեղ թուշող կրակի վրա հսկողություն սահմանել:

Բացի այս անհրաժեշտ է նույնպես նկատի ունե-
նալ, վոր փայտի պահեստների տերիտորիան սովորա-
բար պատած է լինում տաշեղով, թեփով, փայտի կե-
ղեններով և այլն, վորոնք յերբեմն գետնի յերեսին ա-
ռաջացնում են վառվող աղբի բավական հաստ շերտ:
Այդ աղբը վառվելու դեպքում, վորպեսզի կարելի
լինի կրակի տարածման առաջն առնել, պետք է նրա
չարժվելու ճանապարհին ամբողջ շերտի խորությամբ

խրամատ փորել և մեջը ջուր լցնել: Յեվ վորովհետև
միայն հրդեհաշեջների ուժերով չատ դժվար է այդ-
պիսի խրամատ փորել, հրդեհաշեջման դեկավարը
պետք է այդ աշխատանքի մեջ քաշի պահեստի բան-
վորներին:

Հեշտ բոցավառվող հեղուկները հանգցնելը

Չի հանձնարարվում հեշտ բոցավառվող հեղուկ-
ները (բենզինը, կերոսինը, նավթը, սկիպիդարը և
այլն) հանգցնել ջրով. այդպիսի դեպքերում պիտի
գործածել ավազ կամ հող, վորը վառվող հեղուկի
վրա լցնելով, դադարեցնում են այդպիսով ողի մոտե-
նալը նրան, հետևապես և դադարեցնում են հեղուկի
վառվելը:

Այդպիսի դեպքերում ջրի գործածությունն ան-
ցանկալի յե, վորովհետև վերոհիշյալ հեղուկները
ջրից թեթև լինելով, բարձրանում են նրա յերեսը և
նրանց վառվելը շարունակվում է:

Բացի դրանից կա նաև մի այլ վտանգ, այդ այն
է, վոր հանգցնելու համար կիրառվող ջուրն այս ու
այն կողմ թափվելով, իր հետ միասին թափում է
նաև վառվող հեղուկը, վորը վառում է իր ճանապար-
հին հանդիպած տաք նյութերն ու առարկաները:

Ջրով թուլյատրվում է հանգցնել այնպիսի հեշտ
բոցավառվող հեղուկներ, ինչպիսին է սպիրտը, վո-
րը ջրին խառնվելիս կորցնում է իր վառվելու ընդու-
նակությունը:

Փոքր քանակությամբ բոցավառված հեղուկը հա-
ջողությամբ հանգցնել կարելի յե վառվող տեղի վրա
հաստ կտոր կամ հագուստ (աղյալ, գորգ, վերարկու
և այլն) փռելով, վերջիններս նախապես թրջելով:
Այդպիսի դեպքերում բարակ կտորեղենի կամ կաշե
հագուստի գործածությունն անթույլատրելի յե և
վտանգավոր:

Հեշտ բոցավառվող հեղուկների հանգցնելու լա-
վագույն միջոցը քիմիական կրակմարիչներով, փրի-

ըամղիչներով, ինչպես և փրփրագեներատորներնով ու փրփրաակումուլյատորներով տրվող փրփուրն է: Ուստի յեթե հրդեհաշիջման այգւղիսի միջոցներ գոյութիւն ունեն, անհրաժեշտ է իսկույն և յեթ դիմել դրանց ոգնութեան: Այդ փրփուրը լցվելով բոցավառվող հեղուկի յերեսին, նրան պատում է ամուր և թանձր շերտով, վորը թույլ չի տալիս, վոր ողը հեղուկին մոտենա և այրվելն արագ կերպով դադարեցնում է:

Այդ դեպքերում, յերբ հարկ է լինում գործ ունենալ մետաղե ցիստերների, բակերի և այլ անոթների մեջ պահվող բոցավառվող հեղուկների հետ, բացի փրփուրով հանգցնելուց, անհրաժեշտ է ոգտվել նաև նասոսների ջրացայտերից՝ սառեցնելու համար վառվող ռեզերվուարի պատերը, վորոնք ուժգին տաքանալուց կարող են կծկվել, իջնել և բացվել:

Յեթե վառվող հեղուկը գետին է թափվում և հրդեհի տարածման սպառնալիք է առաջ բերում, պետք է վառվելու տարածութիւնը շրջապատել հողի, ավազի կամ գոմաղբի թմբով և ուժգին ջրացայտերով կրակը հանգցնել:

Հրդեհը գարածներում

Գարածներ կոչվում են այն շենքերը, վորտեղ գտնվում են ՄՏԿ-ներում, խորհրդատեսութիւններում և կոլտնտեսութիւններում տարեցտարի ավելի ու ավելի մեծ գործածութիւն ստացող ավտոմոբիլները և տրակտորները: Ուստի միանգամայն հասկանալի չէ, վոր հրդեհաշիջ աշխատողները պետք է գիտենան նաև գարածներում հրդեհները հանգցնելու պրակտիկան:

Գարածներին հրդեհը վտանգ է սպառնում ավտոմոբիլներում և տրակտորներում յեղած բենզինով և յուղով, ինչպես և այն բոցավառվող հեղուկների պաշարով, վորը մեծ մասամբ պահվում է հենց այդ գարածներում:

Առաջին դեպքում գարածի հրդեհը հանգցնելու ժամանակ հրդեհաշիջների գլխավոր խնդիրն այն է, վոր կարողանան չվառվող ավտոմոբիլներն ու տրակտորները գարածից դուրս հանել:

Յերկրող դեպքում, յերբ գարածում վորոշ քանակի բենզին և յուղ է պահված, անհրաժեշտ է ամենից առաջ միջոցներ ձեռք առնել այդ հեշտ բոցավառվող հեղուկները գարածից հեռացել և անպայմանագից դուրս հանել ավտոմոբիլներն ու տրակտորները:

Յեթե հրդեհաշիջ խումբը կամ բջիջը հրդեհի տեղը հասնելու մոմենտին գարածում պահված բենզինը կամ յուղն արդեն այրվել են, այդ դեպքում անհրաժեշտ է անմիջապես զբաղվել ավտոմոբիլներն ու տրակտորներն այդտեղից դուրս հանելով և միաժամանակ սկսել հեշտ բոցավառվող հեղուկներն ավազով, հողով և քիմիական կրակմարիչների փրփուրով հանգցնել:

Հրդեհով բռնված գարածի շենքը, վորից դուրս են տարված ավտոմոբիլներն ու տրակտորները և հեշտ բոցավառվող հեղուկները, հանգցվում են սովորական կարգով, այսինքն գործածութեան են դնում մի կամ մի քանի փողակ՝ նայած տեղի պայմաններին:

Յերբ հրդեհով բռնված է ամբողջ գարածը և հնարավոր չէ ավտոմոբիլներն ու տրակտորները դուրս տանել, անհրաժեշտ է ջրացայտերով վորքան կարելի չէ արագ կերպով վառվող մեքենաների բոցը հանգցնել և դրանից հետո անմիջապես կազմակերպել գարածից նրանց դուրս բերելու գործը:

ՀՐԴԵՀՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԱՅՆ
ՇԵՆՔԵՐՈՒՄ, ՎՈՐՈՆՔ ՈՒՆԵՆ ԲԱՐՁՐ ՅԵՎ ՅԱԾՐ
ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ
ՄԵՔԵՆԱՆԵՐ

Ներկայումս ելեկտրականությունը մեր յերկրում մեծ չափերով ծավալվում է վոչ միայն քաղաքներում և արդյունաբերության մեջ, այլև սոցիալիստական գյուղատնտեսության մեջ:

Ուստի հրդեհաչեջ աշխատողները պետք է գիտենան ելեկտրական կայաններում հրդեհը հանգցնելու պայմաններ և այն շենքերում, վորտեղ կան բարձր ու ցածր լարվածության հոսանքի ելեկտրական մեքենաներ:

Ցածր լարվածության հոսանքի մեքենաներն ըստ ինքյան վտանգավոր չեն, սակայն վորոշ պայմաններում, նրանք կարող են դժբախտ դեպքեր առաջ բերել: Այդ պատճառով ել պետք է կանոն ընդունել, վոր հրդեհաչեջները յերբեք չգիպչեն ելեկտրական հոսանքի ներգործությանը յենթակա լարերին և գործիքներին, անկախ այդ հոսանքի լարվածությունից:

Յեթե հրդեհը տեղի յե ունեցել ելեկտրամեքենայի անսարք լինելուց, նրան պետք է ելեկտրականությունից անջատել և ապա անցնել կրակը հանգցնելու գործին:

Ելեկտրական ցանցի լարերը կարճ միացումից վառվելիս, անհրաժեշտ է միմիայն անջատել ցանցի այն մասը, վորտեղ հրդեհ է առաջացել, վորի համար պետք է համապատասխան անջատիչը պտտեցնել կամ ելեկտրա-ապահովիչը հանել:

Այն դեպքերում, յերբ այդ հնարավոր չե անել, պետք է լարերը հատուկ մկրատով և մեկուսացված բռնակ ունեցող ակցանով կտրատել: Այդպիսի գործիքներ չլինելու դեպքում կարելի չե լարերը կտրատել կացինով: Սակայն այն պայմանով միայն, յեթե անպայման կացինի կոթը չոր է, և հրդեհաչեջը ձեռքերին ուտինե ձեռնոց կամ բրդե չոր թաթպաններ և հագցրել:

Կտրատված ելեկտրալարերի ծայրերը պետք է զանա-

զան կողմերի վրա ծռել, վորպեսզի նրանք իրար չմիանան:

Բարձր լարվածության հոսանքատար ելեկտրալարերը կտրատել չի կարելի:

Ելեկտրական կայանում և բարձր լարվածության ելեկտրական մեքենա ունեցող շենքում տեղի ունեցած հրդեհի ժամանակ ջրից պետք է ոգտվել խիստ զգուշությամբ և այն ել միմյան շենքը, նրա մասերն ու կառուցվածքները հանգցնելու համար, թույլ չտալով, վոր այդ ժամանակ ելեկտրական անոթների, մեքենաների և սարքավորման վրա ջուր թափվի, վորպեսզի նրանք չփչանան և խցանից չհանվեն կամ չարքից դուրս չգցվեն: Ամենից լավ է հանգցնելուց առաջ մեքենաների աշխատանքը դադարեցնել:

Վառվող ելեկտրական գործիքները պետք է հանգցնել չոր ավազով կամ չոր (վոչավոր) կրակմարիչներով:

Ելեկտրական կայանում և բարձր լարվածության հոսանքի ելեկտրական մեքենա ունեցող շենքում հրդեհը հանգցնելիս անպայման անհրաժեշտ է ոգտվել նրանց տեխնիկական անձնակազմի ցուցումներով և խորհուրդներով:

ՀՐԴԵՀՆ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐՈՒՄ

Արդյունաբերական ձեռնարկություններում մեծ մասամբ ահադին վառելանյութ է կուտակվում, իսկ շենքի ներսում հատակների և պատերի մեջ վերհան մեքենաների, տրանսպարտյորների, լարժափոկների, տրանսմիթիաների և այլ նպատակների համար սովորաբար լինում են զանազան տեսակի խորչեր, ակոսներ, փոսեր և այլն: Այդ բոլորը միասին վերցրած հրդեհի արագ տարածման համար չափազանց բարեհաջող պայմաններ են:

Ուստի արդյունաբերական ձեռնարկության մեջ հրդեհը հանգցնելու ժամանակ հրդեհաչեջների գլխավոր խնդիրն է վորքան կարելի յե ավելի արագ կերպով փողակները տալ խորշերին, ակոսներին և անցքերին, վորոնցով կրակը կարող է տարածվել հարեւան շենքերը և վերեւ ու ներքեւ գտնվող հարկերը:

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է մեքենաներն ու գազգյահները կանգնեցնել, ելեկտրական հոսանքն անջատել, և յեթե հնոցին վտանգ է սպառնում, կաթսաների գոլորշին բաց թողնել:

Վուշի և կանեփի նախնական մշակման գործարանների հրդեհների ժամանակ պետք է խիստ ուշի-ուշով պարզել, թե արդյո՞ք ողափոխիչներ, կրակաքաշ և փոշեքաշ մեքենաներն անջատված են, վորոնցով կրակը կարող է չափազանց արագ կերպով տարածվել: Հակառակ դեպքում հրդեհաչիջման ղեկավարը պետք է կարգադրի այդ գործիքներն անմիջապես կանգնեցնել և միջոցներ ձեռք առնել ողափոխիչի տուփերի սողնակները փակել, վորտեղ հրդեհի պայմանների համեմատ այդ հնարավոր կլինի:

Արդյունաբերական ձեռնարկության մեջ առաջացած հրդեհը հանգցնելը չափազանց դժվար գործ է. այդ պատճառով եւ հրդեհի վայրն ամենից առաջ տեղ հասած հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետք, նայած կրակի ուժին և նրա տարածմանը, պետք է անմիջապես իրեն ոգնության կանչի հարեւան մեկ կամ մի քանի հրդեհաչեջ կազմակերպության:

Հրդեհաչիջման պրոցեսում պետք է պարզել, թե կա՞ն արդյոք ձեռնարկության մեջ փայտե գալերեյաներ, պատշգամբներ և առանձին շինություններ, ցեխերը և կորպուսներն իրար միացնող այլ կառուցվածքներ՝ այդ գալերեյաներով և պատշգամբներով ելեկտրալարեր, խողովակալարեր, վազոնետկաններ և այլն անցկացնելու համար:

Յեթե պարզվի, վոր այդպիսի կառուցվածքներ կան, պետք է կատարել լրացուցիչ հետախուզություն և նրանցով կրակը տարածվելու սպառնալիքի դեպքում, այդ

տեղերից տալ փողակներ, իսկ նրանց չլինելու դեպքում գալերեյաները քանդել:

Բացի դրանից, պետք է նկատի ունենալ և զգուշանալ տրանսմիսիայի հարմարանքների և այն գերանների ընկնելուց, վորոնց վրա դրված են մեքենաներն ու գազ-գյահները, վորի համար հարկավոր է նրանց նկատմամբ հսկողություն սահմանել և քանդվելու սպառնալիք յե-րեւման գալու դեպքում աշխատող հրդեհաչեջներին վտանգավոր տեղից անմիջապես հեռացնել:

Արդյունաբերական ձեռնարկության մեջ հրդեհը հանգցնելիս, հրդեհաչեջ խմբի կամ կամավոր բջիջի պետք պետք է հիշի իբրեւ կանոն, վոր յուրաքանչյուր գործարան ունի հրդեհաչիջման իր գործիքներն ու միջոցները:

Այստեղ, նայած արդյունաբերական ձեռնարկության մեծությանն ու կրակի վտանգին, կարելի յե հանդիպել հրդեհաչեջ ինվենտարի և սարքավորման՝ սկսած հասարակ դույլերից, ձեռքի քիմիական կրակամարիչներից, հիդրոպուլտերից, ձեռքի հրդեհաչեջ նստոսներից և վերջապես այնպիսի գործիքներով ու կառուցվածքներով, ինչպես որինակ մոտոպոմպերը, ներքին և արտաքին հրդեհաչեջ հիդրատները և այլն: Ուստի, նայած տեղի պայմաններին, հրդեհաչեջ խմբի կամ կամավոր բջիջի պետք պարտավոր է նույնպես ոգտվել հրդեհաչիջման զանազան գործիքներով, վորոնք գոյություն ունեն այն արդյունաբերական ձեռնարկության մեջ, վորտեղ հրդեհ է ծագել:

ՀՐԴԵՀՆ ԵԼԵՎԱՏՈՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՅԱՀԱՏԻԿԱ-ՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ

Ելեվատորներն այն առանձին տեսակի շինություններն են, վորտեղ հացահատիկ են պահում:

Գյուղական վայրերում ելեվատորները սովորաբար պատրաստում են փայտից և գլխավորապես գտնվում են յերկաթուղիների մոտ կամ նավարկելի դետերի ավերին:

Ելեվատորների արտադրական շինությունները բաղ-

Կացած են ելեվատորի (սիլոսի) կորպուսից, մեքենայական բաժնից, ընդունման շտեմարանից, հացահատիկի չորանոցից և տարայի պահեստից, ըստ վորում սիլոսային կորպուսը, մեքենայական բաժինը և հացահատիկի չորանոցը մեծ մասամբ իրենցից ներկայացնում են մի ամբողջութուն կազմող շենքերի խումբ, վորոնք ընդունման շտեմարանով, ստորերկրյա գալերեյայով միացած են տրանսպորտորի հետ: Հրդեհի տեսակետից ամենավտանգավորը կրակով գործող հացահատիկի չորանոցն է, վորտեղ իբրև վառելիք գործ է անվում փայտ, տաշեղ, ծղոտ և թեփ:

Ելեվատորի ներսը յեղած խորշերն ու զանազան տեսակի այլ անցքերը հրդեհի ժամանակ, կրակի տարածման տեսակետից, բավական մեծ վտանգ են ներկայացնում: Ուստի ելեվատորի հրդեհը հանգցնելիս հրդեհաչեջ խմբի կամ կամավոր բջիջի պետք պետք է առաջին հերթին փողակավորներին դնի այդ խորշերի և անցքերի մոտ, վորպեսզի թույլ չտրվի, վոր կրակը նրանցով տարածվի:

Յեթե այդ բանը ժամանակին չարվի, համարյա թե չի կարելի ելեվատորի փրկության վրա հույս դնել:

Հրդեհը վորտեղ ել առաջանա, — սիլոսային կորպուսում, մեքենայական բաժնում, չորանոցում, թե ընդունման շտեմարանում, — հրդեհաչիջման ղեկավարը պետք է հիշի, վոր այդ արտադրական շինությունները միացնող ստորերկրյա գալերեյան իր տրանսպորտով հանդիսանում է կրակի տարածման համար իբրև լավագույն ճանապարհ:

Ուստի անհրաժեշտ է այդ գալերեյայի նկատմամբ իսկույն և յեթ սահմանել հսկողություն և աննշան վտանգի դեպքում միջոցներ ձեռք առնել նրան լիկվիդացիայի յենթարկելու համար:

Շտեմարաններում պահվող հացահատիկների հրդեհը հանգցնելու ժամանակ անհրաժեշտ է հիշել, վոր ծուխն ու ջուրն այդ մթերքը փչացնում են: Ուստի հենց վոր շտեմարանի վառվող մասերում բոցը հանգցվի, հացահատիկը պետք է հանգցնել փոշիա-

ցրած ջրացայտով, ըստ վորում, յեթե վառվելը շատ չի ծավալվել, անհրաժեշտ է վառվող հացահատիկը չվառվողից անջատել:

Յեթե հացահատիկը լցված է տոպրակների մեջ, հրդեհը հանգցնելու հետ միասին պետք է անմիջապես միջոցներ ձեռք առնել վառվող շտեմարանից հեռացնելու այն տոպրակները, վորոնց կրակը դեռ չի հասել:

Միանգամայն պարզ է, վոր միայն հրդեհաչեջների ուժերով այդ բանն անել հնարավոր չէ, ուստի շտեմարանը դատարկելու համար հրդեհաչիջման ղեկավարը պետք է գործի մեջ քաշի նաև հրդեհին ներկա գտնվող քաղաքացիներին:

Հրդեհը հաղմադացնելու

Հրդեհը լիկվիդացիայի յենթարկելուց հետո հրդեհաչեջ խմբի կամ կամավոր բջիջի պետք պետք է հացահատիկի շտեմարանի վարչությանը նախադպուշացնի այն մասին, վորպեսզի նա միջոցներ ձեռք առնի թրջված հացահատիկը չորացնելու համար, վորպեսզի նա ինքնայրման չենթարկվի:

Յեթե հողմադացի հրդեհն առաջացել է ներքևից՝ նրա աշխատելու ժամանակ և դեռևս մեծ չափեր չի ընդունել, տեղ հասած հրդեհաչեջ խմբի կամ կամավոր բջիջի անելիքն ամենից առաջ այն է լինելու, վոր աղացաքաղերը պետք է իջեցնի և թեփերը քամուց շուռ տա ու ամրացնի ցցից: Դրանից հետո անհրաժեշտ է մարդկանց մի մասին համապատասխան տեխնիկական սպառազինումով ուղարկել վերև, վորպեսզի անհրաժեշտության դեպքում կարելի լինի կրակի տարածման առաջն առնել, իսկ հրդեհաչեջ խմբի կամ բջիջի մյուս ուժերը պետք է ոգտագործել ցածից անմիջապես կրակը հանգցնելու համար:

Ըստ ինքյան հասկանալի չէ, որ վերևում աշխատող հրդեհաչեջներն ակամա նահանջի դեպքում պետք

ե ապահովված լինեն յետ դառնալու ճանապարհով:

Հրդեհը ցածից հանգցնելու հետ միասին, նայած հրդեհի մեծությանը, պետք է տալ մեկ կամ մի քանի ջրացայտ, ըստ վորում փողակավորները պետք է գործեն արագ և յեռանդուն կերպով առանց ջրին ափսոսելու, վորովհետև հողմաղացում գտնվող դյուրավառ նյութերի և հողմաղացը պատրաստած նյութերի առատությունը, նրա մեխանիզմն ու սարքավորումը, ինչպես և հողմաղացի պատերի ու մեխանիզմների վրա մեծ քանակությամբ նստած ալրափոշին այնպիսի պայմաններ են ստեղծում, վորոնցում հրդեհը զարգանում է խիստ արագությամբ և վառվելը կատարվում է շատ կատաղի կերպով:

Ջրացայտերով գործելիս փողակավորները չպետք է նրանց ուղղեն ալրակույտերին, վորպեսզի նրանք ցրվի չգան, վորովհետև այդ նպաստում է կրակի տարածվելուն:

Վորպեսզի կրակն արագորեն չտարածվի ալրափոշով ծածկված պատերի և մեխանիզմների վրա, հանձնարարվում է նրանց վրա փոշիացրած ջրացայտ բաց թողնել:

Գիշեր ժամանակ ջահ գործածելիս, նրա հետ պետք է վարվել զգուշությամբ և նրա բոցն ալրափոշով պատած առարկաներին չդիպցնել, վորպեսզի այդ փոշին չվառվի և նույնիսկ չպայթի:

Այն դեպքերում, յերբ հրդեհը միանգամից մեծ չափեր է ընդունել, և տեղ հասած հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետի համար միանգամայն ահնայտ է դառնում, վոր հրդեհն անհնարին է հանգցնել, անհրաժեշտ է հրդեհաչեջների օպերատիվ մարտական գործողությունները դասավորել այնպես, վոր կրակին հնարավորություն չտրվի անցնելու հարևան շենքերն ու կառուցվածքները:

Միաժամանակ անհրաժեշտ է բոլոր մարդկանց հեռու պահել վառվող հողմաղացից, վորպեսզի վերջինիս ընկնելու ժամանակ մարդկանց դժբախտու-

թյուն չպատահի, վորովհետև հենց վոր հողմաղացի հիմնական հենարաններն ու նրան կապող ֆերմաները վառվում են, հողմաղացն անխուսափելիորեն վայր է ընկնում:

Հրդեհը մեխանիկական շարժիչներով գործող աղացներում

Մեխանիկական շարժիչներով գործող աղացները դյուրակալ վայրի պայմաններում մեծ մասամբ տեղավորված են լինում մեկ հարկանի շենքերում:

Այդպիսի աղացներն ունենում են հետևյալ հիմնական շենքերը.

ա) մեքենայական բաժին, վորտեղ դրված են նավթով կամ կերասինով աշխատող ներքին այրման շարժիչը, ինչպես և դինամոմեքենան, յեթե աղացն ունի ելեկտրալուսավորություն.

բ) գտիչ բաժին, վորտեղ գտում են հացահատիկը.

գ) աղալու բաժինը, վորտեղ աղացվում է հացահատիկը:

Ըստ եյության վերահիշյալ աղացները հրդեհի տեսակետից հանդիսանում են չափազանց վտանգավոր աղացներ, ըստ վորում բացառիկ վտանգ են ներկայացնում գտիչ բաժինները, վորոնցում մյուս բաժինների համեմատությամբ առանձնապես մեծ քանակությամբ հեշտ բոցավառվող փոշի յե կուտակվում: Այդ փոշին վորոշ համեմատությամբ ողի հետ միանալով, կարող է տալ նույնիսկ պայթուցիկ խառնուրդ, ուստի իբրև կանոն, անպայման պետք է արդելվի վառված ջահերով առհասարակ աղացաշենքերը և մասնավորապես գտիչ բաժինը մտնել:

Մեքենայական շարժիչով գործող աղացի հրդեհի ժամանակ տեղ հասած հրդեհաչեջ խմբի կամ բջիջի հիմնական խնդիրն է թույլ չտալ, վոր կրակը տարածվի, իսկ յեթե այդ հաջողվի անել, այնուհետև կրակը

հանդգնելն առանձին դժվարություն չի ներկայացնում և պետք է կատարվի ճիշտ այնպես, ինչպես անբնական փայտաշեն շենքերի հրդեհը հանգցնելը:

Այլ խնդիր է, յերբ հրդեհաշեջ խումբը կամ բջիջն ի վիճակի չեն այդ խնդիրը լուծելու կամ թե նրանց տեղ հասնելու մոմենտին կրակն այնպիսի չափեր է ընդունել, վոր նրա դեմ պայքարելը չափազանց դժվար է: այդպիսի դեպքում հրդեհաշեջների գլխավոր ջանքերը պետք է ուղղվեն մեքենայական բաժինը կրակից պաշտպանելուն, վորը հանդիսանում է աղացի ամենաարժեքավոր մասը:

Յեթե մեքենայական բաժնումն է հրդեհ առաջացել, այդ դեպքում կրակը ջրով հանգցնելիս պետք է շատ զգույշ լինել, վորպեսզի սարքավորումը չփչանա բացի դրանից ելեկտրալարերի և մեքենաների հետ պետք է չափազանց զգույշ լինել:

Վառվող, հեշտ բոցավառվող հեղուկը պետք է հանգցնել, ինչպես արդեն վերը ցույց տրվեց, ավագով, հողով, կամ փրփրատու կրակմարիչներով:

Հրդեհն արագ կերպով հանգցնելն անհնարին լինելու դեպքում պետք է մեքենայական բաժնից դուրս տանել այն ամբողջ սարքավորումը, վորը հրդեհի սրայմանների համաձայն հնարավոր է դուրս հանել նախապես շարժիչն ու դինամոմեքենան կանգնեցնելով:

Հրդեհը ջրադացներում

Ջրադացների հրդեհները փոչնչով չեն տարբերվում հողմադացների և մեքենայական շարժիչներով գործող աղացների հրդեհներից, վորովհետև նրանցում մեծ քանակությամբ յեղած փայտն ու հեշտ բոցավառվող փոշին վառվելու համար ստեղծվում են նույն պայմանները:

Շնորհիվ ջրադացների ջրի առատության, նրանց հրդեհները հանգցնելն առանձին դժվարություններ չի

ներկայացնում և պետք է կատարվի, պահպանելով այն կանոնները, վորոնք պարզաբանված են հողմադացների և մեքենայական շարժիչով գործող աղացների հրդեհները հանգցնելու նկարագրության մեջ:

Հրդեհը կրուպադացներում և կորեկադացներում

Կրուպադացներում և կորեկադացներում հրդեհն այն վտանգն ունի, վոր այնտեղ հացահատիկի մշակումից մեծ քանակությամբ վառվող փոշի և զանազան տեսակի մնացորդներ են կուտակվում: Վառվող կրուպադացները և կորեկադացները հանգցնելն առանձին դժվարություն չի ներկայացնում և պետք է կատարվի սովորական կարգով, ուժեղ ջրացայտերի գործադրությամբ, ինչպես բնակելի փայտե շենքերը հանգցնելիս:

Վառվող թեփի, փոշու և այլ մնացորդների վրա պետք է ջուր ցանել: Չպետք է ուժեղ ցայտ գործադրել, վորովհետև նրա հարվածներից մնացորդները վերև են բարձրանում և դրանով վառվելը սաստկանում է:

Հրդեհը խրճանոցներում

խրճանոցները խիստ նախնական կառուցվածք ունեցող շինություններ են, վորոնց մեջ հացահատիկներ, վուշ, կանեփ են չորացնում, վորոնք հրդեհի տեսակետից շատ վտանգավոր են:

Ճիշտ է, վերջին տարիներս խրճանոցներն սկսել են փոխարինվել ավելի կատարելագործված և պակաս վտանգավոր չորանոցներով, սակայն այնուամենայնիվ դեռևս շարունակում են խրճանոցներից ոգտվել:

խրճանոցների հրդեհն ամենից առաջ տեղի չե ունենում հացը, վուշը, և կանեփը չորացնելու ժամանակ վառարանի սարքին չլինելու և աշխատողներին անզգուշության հետևանքով, վորոնք խրճանոցում

ծխում են, վառած կրակի վրա հսկողություն չեն ունենում և այլն:

Յեթե խրճանոցներում վառվում են առանձին խրճեր, անհրաժեշտ է նրանց վրա ջուր լցնել դուրս լերով, վորոնք անհրաժեշտ է խրճանոցում միշտ պատրաստ պահել, վորից հետո պետք է վառված խրճերը շենքից դուրս տանել:

Վառվող խրճերը պետք է հանդցնել հետևյալ ձևով. ամենից առաջ պետք է ծածկել վառարանի հրանցքը և վառվող տեղերի վրա թաց հող և ավազ լցնել, աչխատելով միաժամանակ վորքան կարելի յե՞տւշուշ բացել խրճանոցի դուռը, վորպեսզի ողի հոսանք չառաջանա:

Այն դեպքերում, յերբ չի հաջողվում հրդեհը հանդցնել, և կրակը մեծամեծ չափեր է ընդունում, նրան լիկվիդացիայի յենթարկելու համար, նայած հրդեհի ընդունած չափերին և նրա պայմաններին, պետք է հրդեհաշեջ նասոսներից գործի մեջ մտցնել մեկ կամ մի քանի ջրացայտ և կացնավորների մեկ ջոկ կամ ջոկատ՝ խրճանոցի առանձին մասերը և կառուցվածքներն անհրաժեշտորեն քանդելու հետ կապված աչխատանքների համար:

Վերջին դեպքում խրճանոցի հրդեհը հանդցնելու տակտիկան վոչնչով չի տարբերվում սովորական անբնակելի փայտե շենքերի հրդեհների հանդցնելու տակտիկայից:

Հրդեհը՝ անհրաժեշտ արանքներում, անոթի և սկիպիդարի գործարաններում

Ձիթագործարանի շենքի հրդեհը հանդցնելը վոչ մի դժվարություն չի ներկայացնում: Սակայն պատրաստի յուղի և մշակման համար պատրաստված ընդեղենի պաշարը, ինչպես և ձիթագործարանում յեղած արտադրության մնացորդները, որինակ, թեփը, հրդեհը հանդցնելու համար անբարենպաստ պայմաններ են ստեղծում: Անգամ փոքր հնարավորության գոյության

դեպքում առաջին հերթին անհրաժեշտ է յուղով լիքը տակառները ձիթագործարանից տանել անվտանգ տեղ:

Վառվող ձեթը պետք է հանդցնել ավազով, հողով և քիմիական փրփուրի միջոցներով: Ընդեղենի թեփը պետք է հանդցնել, նրան ջրացայտերով աստիճանաբար թրջելով:

Յեթե հնարավոր չի յեղել հրդեհի սկզբում ձեթով լիքը տակառները հեռացնել, և հրդեհը մեծամեծ չափեր է ընդունում, պետք է բոլոր միջոցները ձեռք առնել ձիթագործարանի սարքավորումը և ընդեղենների պաշարը փրկելու:

Ձյութի և սկիպիդարի գործարաններում հրդեհը հանդցնելու ժամանակ կարող են ել ավելի անբարենպաստ հանգամանքներ ստեղծվել, քան ձիթագործարաններում տեղի ունեցած հրդեհի ժամանակ: Այդ տեղի յե ունենում այն պատճառով, վոր՝ ձյութի և սկիպիդարի գործարաններում համարյա մշտապես ավելի մեծ քանակութամբ բոցավառվող նյութեր կան, վորոնք չի թույլատրվում ջրով հանդցնել, վորպեսզի կրակը չտարածվի: Զրով պետք է ոգտվել միմիայն գործարանի շենքի վառվող մասերն ու կառուցվածքները հանդցնելու համար: Բոցավառվող հեղուկները հանդցնելու համար պետք է գործածել ավազ, հող և քիմիական հրդեհաշիջման միջոցներ:

Միաժամանակ չպետք է մոռանալ, վոր ձեթը, ձյութը, սկիպիդարը վառվելիս կարող են բակերից, տակառներից և այլ ամաններից ցած թափվել և կրակի տարածման սպառնալիք առաջ բերել:

Այդպիսի դեպքերում պետք է վառվող տարածությունն անմիջապես չրջապատել հողի կամ ավազի թմբով և ուժգին ջրացայտերով կրակը խափանել կամ նրա վրա հող ու ավազ լցնել:

Հիվանդանոցների հրդեհը հանգցնելը մյուս բոլոր տեսակի ուրվագծերի հանգցնելուց առաքելովում է նրանով, վոր հիվանդանոցներում հրդեհաշենքերը գործ ունեն իրենց հիվանդությամբ անկողիններին կապած անգոր մարդկանց հետ: Այդ պատճառով տեղ հասած հրդեհաշենք խմբի կամ բջիջի պետք պետք է ամենից առաջ պարզի, թե արդյո՞ք հիվանդների համար մահվան սպառնալիք չի ստեղծվել և այդպիսի իրական սպառնալիքի դեպքում պարտավոր է ամբողջ ուժերն անմիջապես տրամադրել մարդկանց փրկելու համար:

Հիվանդներին պետք է փրկել հատուկ զգուշացվածությամբ, սառնարյունությամբ ու առանց չփոթվելու, յենթարկվելով միաժամանակ հիվանդանոցի անձնակազմի ցուցումներին (հիվանդներին տեղափոխելու):

Յեթե խմբի կամ բջիջի անձնակազմը միաժամանակ բավարար է մարդկանց փրկելու և հրդեհը հանգցնելու համար, փրկիչ մանեվրների համար պետք է ոգտագործել կացնափորները ջուր (ջուկատը), իսկ հրդեհը հանգցնելու գործը հանձնարարել փողակավորների ջուկին (ջուկատին):

Հիվանդանոցի հրդեհը պետք է հանգցնել առանց աղմուկի և աղաղակների, միաժամանակ խուսափելով հնչունական աղղանչան տալուց, վորպեսզի հիվանդներն ամելի չանհանգստանան:

Հրդեհը լիկվիդացիայի յենթարկելու գործում անհրաժեշտ է առանձին զգուշացվածություն և ճշտապահություն հանդես բերել հիվանդանոցի հատուկ շենքերում (հերձարան, լաբարատորիա, դեղատուն և այլն), վորտեղ կենտրոնացված է արժեքավոր սարքավորում և պահվում են զանազան տեսակի դեղեր, վորոնց մեջ լինում են թունավոր և հրավտանգ նյութեր:

Նախքան վերոհիշյալ շենքերի հրդեհը հանգ-

ցնելուն անցնելն անհրաժեշտ է հիվանդանոցի վարչությունից ստանալ համապատասխան ցուցումներ և ապա վառվող շենքից անվտանգ տեղ փոխադրել այն բոլոր ապարատները, դեղերը և այլն, վորոնք շենքի վառվող մասերն ու կառուցվածքները քանդելիս և վրան ջուր լցնելիս կարող են վնասվել կամ փչանալ:

Կրակը հանգցնելիս ջրից պետք է ոգտվել սահմանափակ չափով: Նախապատվություն պետք է տալ քանդելուն. քանդվելուց ստացված նյութեր վառվող շենքից պետք է հանել, վրան ջուր լցնել:

Հրդեհը հանրային հաստատությունների շենքերում

Հանրային հաստատությունները (չրջգործկոմները, գյուղխորհուրդները, կոլանտեսությունների վարչությունները և այլն) սովորաբար զետեղվում են բնակելի տիպի շենքերում: Ուստի նրանց հրդեհների հանգցնելը համարյա վոչնչով չի տարբերվում բնակելի տների հրդեհների հանգցնելուց:

Հանրային հաստատությունների շենքերի հրդեհները հանգցնելու ժամանակ հրդեհաշենք խմբի կամ բջիջի գլխավոր խնդիրներից մեկն էլ այն է, վոր նրանք կարողանան փրկել հաստատություններում պահված թանկարժեք բաները, փաստաթղթերը, կարևոր գրադրությունները և շենքում գտնվող սարք ու կարգը:

Փաստաթղթերն ու կարևոր գրադրությունները փրկելիս շենքից դուրս բերվածը պետք է անմիջապես հանձնել միլիցիայի պահպանությանը:

Հրդեհը գյուղական քաղաքներում և հասարակական հավաքավայրերում

Յերբ գյուղական թատրոններում և հասարակական հավաքավայրերում (կինոներ, ժողովրդական տներ, աղումբներ, խրճիթ-ընթերցարաններ և այլն) շատ մարդիկ են հավաքված, այդպիսի ուրվագծերի

հրդեհն իրենից լուրջ վտանգ է ներկայացնում, վերստին հետև դա կապված է մարդկային զոհերի հետ:

Այդպիսի հրդեհների ժամանակ մարդիկ մեծ մասամբ վոչնչանում են վոչ թե կրակից, այլ գլխավորապես առաջացած խուճապից: Այդպիսի բոլորների մարդիկ ամբողջովին, կորցնելով իրենց մտածելու ընդունակութունը—անձնատուր են լինում միմիայն ինքնապաշտպանության բնազդին և յերկյուղից փախուստի դիմելով այնպիսի պայմաններ են ստեղծում, վորոնց հետևանքով մարդկային զոհերն անխուսափելի յեն:

Այդ պատճառով գյուղական թատրոնների հրդեհը հանգցնելիս հրդեհաչեջների հիմնական խնդիրն է լինելու իրենց տրամադրության տակ յեղած բոլոր ուժերով ու միջոցներով մարդկանց փրկել:

Մարդկանց փրկելիս հրդեհաչեջները պետք է լինեն սառնասրտ, առանց չփոթվելու և վճռական. այդպիսի դեպքերում մարդկանց հաջող կերպով փրկելու համար պահանջվող կարգը վերանկանդնելու նպատակով չհնազանդվողների նկատմամբ պետք է բռնություն գործադրել:

Փրկելու հետ միաժամանակ թատրոնի բոլոր շենքերում ըստ հնարավորության պետք է կատարել մանրամասն հետախնդրություն, վորպեսզի պարզվի, թե արդյո՞ք այնտեղ մարդիկ չեն մնացել:

Յերկրորդ հերթին արդեն անհրաժեշտ է անցնել հրդեհը հանգցնելու գործին:

Ամենից հաճախ կրակն առաջանում է բեմում, վորի հրդեհը սովորաբար մեծ սպառնալիք է առաջ բերում ամբողջ թատրոնի համար: Այդպիսի դեպքերում հրդեհաչեջ խումբը կամ բջիջը պետք է իրենց ջանքերը թափեն բեմը դիտասրահից անջատելու գործի վրա և թույլ չտան, վոր կրակը սրահի մեջ անցնի: Դրա համար փողակները պետք է բեմին ուղղել դիտասրահի կողմից և միաժամանակ կացնավորներին ուղարկել տանիքը՝ նրան բեմի վերևից քանդելու, վորպեսզի ողը հրդեհի ուժը քաշի դեպի վերև:

Յեթե հնարավոր է պետք է կացնավորների հետ միասին տանիքը բարձրացնել նաև փողակներ՝ բեմի վերևից նրանցով աշխատելու համար:

Բեմում սկսված հրդեհի ժամանակ, յերբ վառվում են դեկորացիաները, վարագույրը և բեմի մյուս դժվար վառվող մասերը, պետք է արագ կերպով նրանց պոկել և քաշել դուրս, վորտեղ և նրանց հանգցնել:

Կինոներում հրդեհի մեծ վտանգ են ներկայացնում կինո-բուդեղաները, վորտեղ կարող է տեղի ունենալ ցելլուլոյդի կինոֆապակների բոցավառում: Այդ ֆապակներն այրվելուց առաջանում է հեղձուցիչ ծուխ և ուժեղ բոց:

Կինոբուդեղաներում առաջացած հրդեհները հանգցնելիս, հրդեհաչեջները պետք է ջանք թափեն ամենից առաջ թույլ չտալու, վոր ծուխը թափանցի դիտասրահ:

Դրա համար հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետք է հրդեհաչեջներից մեկին կամ յերկուսին ուղարկի դիտասրահը պարզելու, թե արդյո՞ք պրոեկցիոն և տեսողական անցքից այնտեղ ծուխ չի անցնում, և յեթե անցնում է, միջոցներ ձեռք առնել այդ դադարեցնելու:

Հրդեհաչեջ խմբի կամ բջիջի մյուս ուժերն ոգտագործվում են վառվող կինոբուդեղան հանգցնելու համար: Յեթե միմիայն կինոֆապակներն են վառվում, նրանց վրա պետք է ավաղ լցնել կամ քիմիական փոշի կրակմարիչներով հանգցնել: Այն դեպքում, յերբ ամբողջ կինոբուդեղան է բռնված կրակով, նրան պետք է հազցնել ուժգին ջրացայտով:

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր յեթե հրդեհաչեջ խմբի կամ բջիջի հրդեհի տեղը հասնելու մոմենտին թատրոնի մարդկանց մեջ խուճապ է առաջացել և մարդկանց կյանքին վտանգ է սպառնում, հրդեհաչեջները պետք է իրենց բոլոր ջանքերն ուղղեն բացառապես առաջացած խուճապը դադարեցնելու և մարդ-

կանց փրկելու, վորից հետո արդեն սկսեն հրդեհը հանգցնել:

Թատրոնը դիտողներին առանձնապես լուրջ վտանգ են սպառնում շարժական կինոները:

Վերջիններս սովորաբար տեղավորվում են վոչ թե հատուկ շենքերում, այլ նրանց համար հարմարեցնում են յեղած շենքերից մեկը, վորն ամենից հարմար է կինոսեսանսներ տալու համար: Այդպիսի դեպքերում կինոապարատն ու կինոժապավենները դառնում են հենց սրահում, վորի պատճառով հրդեհ առաջանալիս չափազանց բարենպաստ պայմաններ են ստեղծվում նրա զարգացման համար:

Յեթե կինոժապավենն է վառվում, ամենից լավ է կացնի ծայրով կամ քանդիչով քաշել այն շրջանը, վորի մեջ ժապավենն այրվում է և գցել ջրով լցված դույլի մեջ և վերջինս անմիջապես դուրս տանել:

Միաժամանակ պետք է միջոցներ ձեռք առնել, վոր թատրոնը դիտող մարդկանց մեջ խուճապ չառաջանա:

Յեթե այն շենքում, վորտեղ շարժական կինոյի սեսանսներ են տեղի ունենում, հնարավոր չի լինում հրդեհն սկզբում հանգցնել, ոգնության հասած հրդեհաշեջները պետք է իսկույն և յեթ սկսեն մարդկանց փրկել, ոգտագործելով այդ նպատակի համար բոլոր դռներն ու պատուհանները:

Ինչ վերաբերում է հրդեհի հանգցնելուն, հրդեհաշեջների անելիքն այն է լինելու, վոր նրանք թույլ չտան կրակին դուրս գալ այն սահմաններից, վորտեղ հրդեհ է տեղի ունեցել, վորի համար գործածության պետք է դրվեն համապատասխան քանակության փողակներ:

Ժողովրդական տներն ու ակումբները նույնպես սովորաբար տեղավորվում են նրանց համար հարմարեցված վորևե շենքում, և յեթե այդպիսի ժողովատեղերում բեմական կառուցվածքներ չկան, նրանց հրդեհները պակաս վտանգավոր են, քան այն ժողովրդական տների և ակումբների հրդեհները, վորոնք ունեն կառուցված բեմեր:

Սակայն անհրաժեշտ է մատնանշել, վոր ժողովրդ-

դական տների և ակումբների շենքերում առատորեն յեղած ամեն տեսակի հեշտ բոցավառվող զարդարանքներն ու դրանց կողքին հակահրդեհային միջոցների հաճախակի բացակայությունը հրդեհների ստեղծման և արագ տարածման համար բարենաջող պայմաններ են ստեղծում:

Ճիշտ նույն դրութունը կարելի չե նկատել նաև խրճիթ-ընթերցարաններում:

Յեթե ժողովրդական տանը, ակումբում, կամ խրճիթ-ընթերցարանում հրդեհ առաջանա այն ժամանակ, յերբ նրանց մեջ շատ մարդիկ կան, հրդեհաշեջների բոլոր ջանքերն առաջին հերթին պետք է ուղղված լինեն մարդկանց կյանքի անվտանգությունն ապահովելուն և ապա հրդեհը հանգցնելուն, վորի լիկվիդացիան կատարվում է այն ընդհանուր կարգով, ինչ վոր սովորական անբնակելի շենքերի հրդեհների ժամանակ:

Ժողովրդական տանը կամ ակումբում բեմ լինելու դեպքում այդ որյեկտների հրդեհը հանգցնում են այնպես, ինչպես թատրոնի հրդեհը:

Մարդկանց վրայի հագուստի հրդեհը հանգցնելը

Յեթե վառվում է մարդու վրայի հագուստը, պետք է վերցնել ծածկելու համար վորևե ծանր շոր (վերարկու, գորգ, ագյալ և այլն), փռել վառվողի վրա, նրան դետին գցել և ծածկոցը վառվողի վրա ամուր սեղմելով կրակը հանգցնել: Այդպիսով դադարեցնելով դեպի վառվող հագուստը տեղի ունեցող ողի հոսանքը, դրանով մենք դադարեցնում ենք նաև վառվելը:

Այդպես վարվելիս մենք պետք է շատ զգուշ լինենք և սխալմամբ վորևե թեթև կտորեղեն (սփռոց, վաբադույր և այլն) չվերցնենք, վորը մեղ լավ ծառայություն չի մատուցի և միայն վառվելը կտարածի:

Յեթե ձեռքի տակ ջուր կա, ձեռնտուլ յե նրա մեջ թրջել այն կտորեղենը, վորն ոգտագործվում է մարդու վրայի վառվող հագուստը հանգցնելու համար:

Հենց վոր վառվելը դադարի, անհրաժեշտ է վառ-

վողի վրայից այրված հագուստը հանել և նրա մարմնի վառված տեղերը փաթաթել վորեւ տեսակի յուղով (սակայն մեջն աղ չպարունակող) թրջված բարակ և մաքուր լաթով: Հասկանալի չէ, վոր այդ միջոցը բժշկական ոգնություն հասցնելու ամենահասարակ միջոցն է, վորից հետո պետք է անմիջապես դիմել բժշկին:

Հրդեհն անտառներում

Անտառային հրդեհները կարելի չէ բաժանել յերեք խմբի.

ա) ստորերկրյա հրդեհ, յերբ վառվում է հողի մակերևութի ցածի տորֆը.

բ) վերերկրյա (վազող) հրդեհ, յերբ վառվում են անցած տարվա չոր խոտը, չոր տերեւներն ու կեղևը, ծառերից ցած թափված ճյուղերը, չորուկը, մանր թփուտները և այլն.

գ) համատարած հրդեհ, յերբ կրակն ընդգրկում է գետնի յերեսի բոլոր վառվող նյութերն ու թփուտները ցածից սկսած մինչև վերև:

Անտառային հրդեհները միմիայն հրդեհաչեջ խմբերի և բջիջների ուժերով հանգցնել յերեք հնարավոր չէ, ուստի այդպիսի հրդեհները լիկվիդացիայի յենթաթարկելու համար սովորաբար դործի մեջ է քաշվում վառվող անտառի մոտի բնակչությունը:

Անտառային հրդեհները հանգցնելու դործի մեջ քաշված բնակչությունը կրակի դեմ հաջող պայքարելու համար պետք է ունենա անհրաժեշտ միջոցներ, սղոցներ, կացիններ, յերկաթե բահեր, փոցխեր, յեղաններ, պատգարակներ:

Ստորերկրյա հրդեհի տարածման առաջն առնելու համար պետք է նրա շուրջը տորֆի հաստության ամբողջ խորությամբ մինչև հատակն ու հատակի ջրերն առու անցկացնել:

Առվի տորֆն ու առվի յեզրի ծառերը պետք է շուռ տալ հրդեհի կողմը, վորպեսզի հնարավորություն չը-

տրվի կրակից դերծ տեղամասը կրակ ընկնի, կրակն առվից են կողմը չանցնի:

Ստորին հրդեհի տարածվելը կարելի չէ դադարեցնել հետևյալ կերպ.

Պետք է հրդեհի շուրջը ցածր խորության առու փորել և միաժամանակ մարդկանց կացիններով, բահերով և սաղարթավոր ծառերի ճյուղերով ուղարկել կրակին դիմադրելու, վորպեսզի նա չտարածվի: Իրա համար հրդեհի տարածման ամբողջ գծի յերկարությամբ և յերկու մետր լայնությամբ շերտի վրա վառվող նյութը մաքրում են, ըստ վորում պետք է այդ շերտի վրայի հին ծառերի ցածի ճյուղերն ու չորուկները կտրտել: Բացի դրանից բահերով և ճյուղերով զինված մարդկանց մի մասը պետք է կրակի վրա հոգ լցնի և նրան ըստ հնարավորության ջրով թրջված ճյուղերով ծեծի:

Յերբ հրդեհը վերջանում է, պետք է նրա տերիտորիայում հրդեհաչեջներ թողնել, վորովհետև կրակը յերբեմն թաղնված լինելով հին կոճերում, մրջնանոցներում և փայտի թափթփուկների մեջ՝ կարող է նոր հրդեհ առաջացնել:

Համատարած հրդեհները լիկվիդացիայի յենթաթարկելը մեծ դժվարություններ է ներկայացնում, վորովհետև կրակը մեծ արագությամբ տարածվում է թե՛ ծառերի կատարներով, և թե՛ փայտի թափթփուկներով, միաժամանակ առաջ բերելով մեծ ջերմություն:

Համատարած հրդեհի տարածման առաջն առնելու համար պետք է կրակի շարժման գծի վրա վոչ պակաս քան 20 մետր լայնությամբ անտառահատում կատարել: Անտառահատման աշխատանքը պետք է սկսել հրդեհից ախպիսի հեռավորության վրա, վոր մինչև նրա մոտենալը կարելի լինի ամբողջ աշխատանքը վերջացնել: Նախքան անտառահատում կատարելը հանձնարարվում է պարզել, թե արդյո՞ք չի կարելի ոգտագործել կվարտալային տարածություններն ու ճանապարհները, ինչպես և բնական խոչընդոտները, որինակ, ձորերը, գետերը և այլն:

Անտառահատում կատարելիս պետք է շարունակ ծառերի գազաթխերը շուռ տալ դեպի հրդեհի կողմը, և յեթե ժամանակը թույլ է տալիս ու բավականին շատ մարդիկ կան, պետք է ծառերը ճյուղերից մաքրել և նրանց քաշել հրդեհի հակառակ կողմը:

Անտառահատման յեզրով պետք է քանդել մեկ մետր լայնության վոչ խորն առու, վորպեսզի կրակը փայտի թափթիփուկների վրայով անտառահատման տեղից չանցնի:

Յերբեմն համատարած հրդեհները հանգցնում են հակընդդեմ կրակով: Այդպիսի դեպքերում անտառահատման տեղում փորված առվի ամբողջ յերկարությամբ չոր ճյուղեր, չորուկ, խոտ և այլ տեսակի վառվող անպետք նյութեր են կուտակում և ապա յերբ հրդեհին հակընդդեմ հոսանք է առաջանում, այդ անպետք նյութերը վառվում են: Այդ ժամանակ կրակին արագ կերպով ծավալվելով, ընթանում է հրդեհի հակառակ կողմը և իր ճանապարհի վրա յեղած բոլոր վառվող նյութերը վռնչացնում է:

Յերբ բաց թողած հակընդդեմ կրակը հրդեհի հետ ձուլվում է, վերջինս ճանապարհին իր համար վառվելու նյութ չունենալու պատճառով, դադարում է:

Առհասարակ անտառների հրդեհը հանգցնում են, — մանավանդ հակընդդեմ կրակի ոգնությամբ, — անպայման փորձված անտառային աշխատողների ղեկավարությամբ:

Հրդեհը դաշտերում — տափաստաններում

Դաշտային — տափաստանային հրդեհների ժամանակ կրակի տարածման առաջն առնելու համար անհրաժեշտ է նրա ճանապարհի վրա ընդհատումներ առաջ բերել: Այդ արվում է կրակի շարժման գծի վրայի խոտը և այլ տեսակի բույսերը հնձելով և այնպիսի հեռավորության վրա, վոր նախքան հրդեհի մոտենալը, կարելի լինի այդ աշխատանքը վերջացնել:

Հնձած շերտի խոտը պետք է հեռացնել հրդեհի հա-

կառակ կողմը: Հնձած շերտի լայնությունը 10 մետրից պակաս չպետք է լինի:

Վորոշ դեպքերում դաշտային տափաստանային հրդեհը դադարեցնելու համար պետք է ոգտագործել այն միջոցը, ինչ վոր համատարած անտառային հրդեհի ժամանակ, այսինքն դործադրել հակընդդեմ կրակ:

Հացահատիկների հրդեհը դաշտում՝ չհնձած ժամանակ և հնձելու ու կալսելու տեղերում

Հացահատիկների հրդեհը չհնձած ժամանակ, առանձնապես նրա հասունացման մոմենտին, ավելի արագությամբ և ուժգին կերպով է տարածվում: Ուստի այդպիսի հրդեհները լիկվիդացիայի յենթարկելու և կրակի դեմ պայքարելու համար պետք է նախապես համապատասխան միջոցներ ձեռք առնել:

Տեղական պայմանների համեմատ դաշտը պետք է բաժանել տեղամասերի՝ յուրաքանչյուրը մոտ 0,5-ից մինչև 1 քառ. կիլոմետր տարածությամբ և այդ տեղերում կենտրոնացնել հերթապահ տրակտորները, հնձող բուժքենաները, փոցխերն ու գութանները և նույնիսկ բամբակաբույսի ավելների պաշար և տակառներով ջուր:

Չհնձված հացահատիկների հրդեհը, յերբ նոր-նոր է բռնկել, կարելի չէ հանգցնել՝ նրանց վրա ջուր կամ հող լցնելով և նույնիսկ շոր փռելով կամ ավելներով նրանց ծեծելով:

Յեթե հրդեհը մեծ չափեր է ընդունել և կրակը տարածվում է մեծ արագությամբ, կարելի չէ նրա ճանապարհի վրա առաջացնել հրդեհի ընդհատում վոչ պակաս, քան 20 մետր լայնությամբ: Այդ նպատակով աշխատեցնում են հնձող մեքենա քաշող տրակտորը, իսկ նրա յետևից մեխանիկական փոցխը և գութան քաշող տրակտորը:

Հացահատիկը հնձելուց ու հավաքելուց և հողը վարելուց հետո ստեղծվում է բավականին լայն շերտ, վորից դենը վառվող նյութեր չլինելու հետևանքով կրակն այլևս առաջ չի գնում:

Ըստինքյան հասկանալի չէ, վոր այդ ընդհատումը պետք է ստեղծել կրակի գծից այնպիսի հեռավորութեան վրա, վորպէսզի կարելի լինի մինչեւ հրդեհի մոտենալը բոլոր աշխատանքները վերջացնել:

Պաշտպանողական շերտ ստեղծելու հետ միաժամանակ հրդեհը հանդգնելու համար պետք է ոգտադործել նաեւ մարդկանց, վորի համար նրանք կրակի գծի յերկարութեամբ շղթա կազմելով սկսում են ջրի մեջ թրջած ավելներով կրակը ծեծել:

Սովորաբար հնձելու և կալսելու տեղերում մեծ քանակութեամբ դյուրավառ նյութեր (հացահատիկների չոր խրճեր, դեղեր, ծղոտ, տրակտորների համար բենզին ու լիգրոին և այլն) են կուտակված լինում, վորի պատճառով այդ տեղերում առաջացած հրդեհները կարող են արագ կերպով տարածվել:

Այդպիսի դեպքերում հրդեհի առաջն առնելու համար, հակահրդեհային միջոցառումների կանոններով կոլտնտեսութեաններում, ՄՏԿ-ներում և խորհատնտեսութեաններում բերքը հավաքելիս հանձնարարվում է անցկացնել թե՛ նախադգուշական, և թե՛ պաշտպանողական բնույթի մի շարք միջոցառումներ:

Մասնավորապէս, հնձելու և կալսելու ինչպէս և կալսիչների, կոմբայնների և ավտոմոբիլների աշխատանքների տեղերում ծագելիք հրդեհը հանդգնելու համար, կանոններով սահմանված նորմաների համաձայն պետք է պահվեն հրդեհաչեղ ինվենտար և սարքավորում:

Բացի դրանից այդ նույն կանոններով խորհատնտեսութեան, ՄՏԿ-ի և կոլտնտեսութեան հրդեհաչեղ խմբի կամ կամավոր բջիջի պետի վրա պարտավորութեան է դրվում կալսիչ մեքենաների հոսանքների, հավաքված բերքի ու դյուղատնտեսական մեքենաների ու գործիքների տեղերում կազմակերպել հրդեհաչեղների որակիչ շերային հերթապահութեան:

Խորհատնտեսութեաններում, ՄՏԿ-ներում և կոլտնտեսութեաններում հրդեհաչեղ խումբ և կամավոր

բջիջ չլինելու դեպքում, վերահիշյալ տեղերում խորհատնտեսութեան և ՄՏԿ-ի կոլտնտեսականներից ու բանվորներից պետք է սահմանել որակիչ շերային հերթապահութեան: Հրդեհ առաջանալու դեպքում կալսիչ մեքենաների հոսանքները, բրիգադների կանգնելու տեղերը, հացահատիկների, խոտի կամ ծղոտի տեղերը, վառվող նյութերը, ավտոմոբիլների, տրակտորների, լոկոմոբիլների և կոմբայնների կանգնելու տեղերը կրակի տարածվելուց փրկելու համար՝ նրանց շուրջը պետք է 5 մետրից վոչ պակաս լայնութեամբ հողը վարել:

Այդ բոլոր միջոցները ժամանակին լիակատար կերպով կիրառելու դեպքում հացահատիկների հնձելու և կալսելու տեղերում հրդեհի դեմ պայքարելն առանձին դժվարութեան չի ներկայացնում, վորովհետև հերթապահ նշանակված հրդեհաչեղները կամ բանվորները, վորոնք իրենց ձեռքի տակ ունեն ջուր և անհրաժեշտ հրդեհաչեղ ինվենտար ու սարքավորում, անշուշտ կապահովեն հրդեհը հանդգնելու գործը:

Յեթե ծագած հրդեհն արագ կերպով մեծ չափեր է ընդունել, այդպիսի դեպքում հրդեհաչիջման դեկավարը, ձեռք առնելով հրդեհը հանդգնելու համար իր տրամադրութեան տակ յեղած բոլոր ուժերն ու միջոցները, պետք է անմիջապէս ոգնութեան կանչի իր կոլտնտեսութեան, ՄՏԿ-ի կամ խորհատնտեսութեան մարդկանց, իսկ անհրաժեշտութեան դեպքում՝ նաև հարևան կազմակերպութեանների մարդկանց, իսկ դրանից հետո դյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները փոխադրի անվտանգ տեղ:

Յերբ պարզվում է, վոր հրդեհի դեմ կռիւն հնարավոր չէ, պետք է պաշտպանողական դիրք գրավել և թույլ չտալ, վոր կրակը տարածվի հացահատիկները հնձելու և հավաքելու աշխատանքների մյուս տեղերը: Այդպիսի դեպքերում իբրև պաշտպանութեան սմենալավ գիծ հանդիսանում է շուրջանակի վարած շերտը, վորից և պետք է ոգտվել:

Տարերային և համարվում այն հրդեհը, վորն իբր չափերով և բնույթով զգալի վնաս հասցնելով, չի կարող հանգցվել տվյալ բնակելի վայրի հրդեհաչեջ կազմակերպությունների և բնակչության ուժերով և միջոցներով. պահանջում է անմիջապես մոտակա մյուս բնակելի վայրերից ոգնություն կանչել:

Տարերային հրդեհների ժամանակ կրակը սովորաբար տարածվում է չափազանց ուժեղ և արագ կերպով: Բացի դրանից հաճախ պատահում է, վոր կրակն իր ուղղությունը փոխելով, համեմատաբար ավելի մեծ տարածություններ է գրավում, միաժամանակ վառելով առանձին շենքեր և նույնիսկ շենքերի խմբեր, վորոնք գտնվում են հրդեհով բռնված տերիտորիայից դուրս:

Տարերային հրդեհի լիկվիդացիան չափազանց դժվարին դործ է, այդ պատճառով ել հրդեհաչեջների ակտիվ-մարտական գործողությունները գլխավորապես պետք է կայանան նրանում, վոր կարելի լինի նրանցով կրակի տարածման առաջն առնել:

Տարերային հրդեհներին մասնակցող հրդեհաչեջ խմբերն ու բջիջները չպետք է իրենց ուժերն ու միջոցները բաժանեն փոքրաթիվ և սակավազոր առանձին խմբերի, այլ պետք է հրդեհաչիջման գլխավոր ղեկավարի ցուցումով վորոշ դիրքեր գրավեն և նրանց վրա գործեն հզոր ջրացայտերի «բռունցքով»:

Պետք է մատնանշել նաև, վոր չի հանձնարարվում հրդեհի վայրը հասած բոլոր ուժերն ու միջոցները գործողության դնել: Հրդեհաչիջման գլխավոր ղեկավարն իր տրամադրություն տակ պետք է պահի հրդեհաչեջ ուժերի և միջոցների մի վորոշ ուղերով, վորպեսզի կրակն իր ուղղությունը փոխելու կամ հրդեհի տերիտորիայից դուրս գտնվող շենքերը փոխադրելու դեպքում կարելի լինի այդ ուղերով փոխադրել սպառնալիքի վայրը և վտանգի առաջն առնել:

Բնակչությանը պետք է ոգտադործել կրակի ընդ-

հատումներ անաջ բերելու, տեղից տեղ փոխադրվող կրակին հետևելու, դույքը փրկելու, ջուր բերելու, հրդեհաչեջ նասոսները բանեցնելու և այլ աշխատանքների համար:

Տարերային հրդեհների ժամանակ հրդեհի ընդհատումները հանդիսանում են կրակի տարածման առաջն առնելու հիմնական միջոցներ: Ուստի այդ ընդհատումը պետք է պատրաստել մեծ, ոգտադործելով դրա համար կրակի այնպիսի բնական արգելքներ, ինչպիսին են՝ ձորերը, կանաչ տնկվածքները, անբնակելի տարածությունները և այլն: Առանձին շենքերն իզուր ու ավելորդ տեղը չքանդելու համար ընդհատումներն անպայման պետք է կատարել հրդեհաչեջ խմբի կամ բջիջի պետկազմի անձնավորություններից մեկի ղեկավարությամբ:

Մի տեղից մյուսը նետվող կրակին հսկելու համար վտանգավոր տեղերում դրված քաղաքացիները պետք է իրենց մոտ ունենան դույքեր, ավելներ կամ ուղղակի սաղարթավոր ծառերի ճյուղեր և պետք է ապահովված լինեն ջրով, վորպեսզի կարողանան առաջացած հրդեհների ոջախները ժամանակին լիկվիդացիայի յենթարկել:

Տարերային հրդեհների ժամանակ փրկված դույքը պետք է դնել անվտանգ տեղ՝ միլիցիայի կամ կամավոր հրդեհաչեջ բջիջների պահապան ջոկատների հսկողություն տակ:

Տարերային հրդեհն ամենից հաջող լիկվիդացիայի յենթարկելու համար դործի մեջ քաշված բոլոր հրդեհաչեջ կազմակերպությունների և քաղաքացիների աշխատանքների ղեկավարությունը պետք է կենտրոնացած լինի մեկ անձնավորության ձեռքում, վորից պահանջվում է բոլոր գործողությունները լիապես համաձայնեցնել տեղական իշխանության ներկայացուցիչների հետ. վերջիններս պարտավոր են հրդեհաչիջման ղեկավարին ցույց տալ լիակատար աջակցություն և ոգնություն:

15. ՀՐԴԵՀԱՄԱՐԻ ԵՄԲԵՐԻ ՅԵՎ ԿԱՄԱՎՈՐ ԲԶԻՋՆԵ-
ՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՂԵՏ-
ՆԵՐԻ, ՀԵՂԵՂՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ
ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Բացի հրդեհները հանգցնելու աշխատանքներից հրդեհաչեջ խմբերի և կամավոր բժիշկների վրա պարտականություն է դրվում իրենց տրամադրությունն առաջին օգնություն տրամադրելու, աղետների, հեղեղների և տարերային այլ դժբախտությունների ժամանակ տեխնիկական առաջին ոգնություն հասցնելու:

Փլումների ժամանակ տուժածներին առաջին ոգնություն հասցնելիս անհրաժեշտ է ձեռք առնել նախազգուշացման բոլոր միջոցները, վորի համար պետք է անհրաժեշտ սեղերում սյուներ տնկել, ամրացնել թափվող հողը կամ նյութը և այլն:

Տուժածներին փրկածքների տակից պետք է հանել քացառապես վերևից քանդելով, անպայման կապերով ամրացնելով, վորպեսզի նոր փրկածքներ չառաջանան:

Ելեկտրալարերին մոտ ընկած մարդկանց փրկելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ելեկտրական հոսանքն անջատել: Յեթե այդ հնարավոր չէ, անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռք առնել՝ անմիջապես հատուկ մասնագետ-ելեկտրագետ կանչելու: Տուժածին ելեկտրական հոսանքի ազդեցությունից ազատելուց հետո պետք է բժշկական ոգնություն ցույց տալ:

Յերկաթուղային աղետների ժամանակ հրդեհաչեջ խմբերը կամ բժիշկները պետք է առաջին հերթին փրկեն տուժածներին, դրա հետ միաժամանակ, նախազգուշական միջոցներ ձեռք առնելու համար ուղիների վրայի չվնասված վագոնները պետք է արգելակվեն, իսկ վնասված վագոնների այն մասերը, վորոնք ընկնելու վտանգ են ներկայացնում, պետք է ամրացվեն: Աղետի վայրը պետք է շրջապատել ազդարարական նշաններով:

Յեթե շողեքարը վնասված է, պետք է նրա վառելի դադարեցնել և կաթսայի գոլորշին բաց թողնել:

Վագոններում տաքացնող գործիքներ լինելու դեպքում պետք է նույնպես նրանց վառվելը դադարեցնել, վորպեսզի հրդեհ չառաջանա:

Հրդեհաչեջ խմբերը կամ բժիշկները հեղեղների ժամանակ հաճախ կանչվում են առաջին ոգնություն:

Տեղեկություն ստանալով այն մասին, թե ջուրը վորոշ մակերևույթից ավելի յե բարձրացել, հրդեհաչեջ խումբը կամ բժիշկը պետք է պատրաստվեն համապատասխան աշխատանքների, վորոնք ավելի շատ մարդիկ են պահանջում, քան ունի հերթափոխությունը: Ուստի հրդեհաչեջ խմբի պետը պետք է փոխվող խմբեր պահի, նրանց մարտական հաշվի մեջ մտցնելու, իսկ կամավոր հրդեհաչեջ խմբի պետը պետք է միջոցներ ձեռք առնի անհրաժեշտ թվով կամավորներ հավաքելու:

Այնուհետև պետք է միջոցներ ձեռք առնի հրդեհաչեջ խումբը կամ բժիշկը վիրակապություն միջոցներով համապատասխան սարքավորումով ապահովելու՝ հեղեղի ժամանակ ոգնություն ցույց տալու համար: Բնակելի վայրի շրջանում, վորտեղ հեղեղների ժամանակ հրդեհաչեջ գումակի շարժումը հնարավոր չէ, բացի ոգնություն ցույց տվող նավակներից, պետք է պատրաստվեն նաև հրդեհները հանգցնելու համար անհրաժեշտ ինվենտարով և սարքավորումով ջրի վրա լողացող միջոցներ:

Փոսերի, խրատների, նկուղների մեջ կամ սառույցների տակ մնացած անասուններին դուրս հանելու ժամանակ անհրաժեշտ է բոլոր միջոցները ձեռք առնել կենդանիներին չվնասելու համար: Խոշոր անասուններին (ձի, կով, յեղ, գոմեշ և այլն) փոսերից, խրատներից, ջրից, նկուղներից և այլն դուրս քաշելու համար պետք է ոգտվել բավականին հաստ պարանով, վորը պետք է գցել անասունի փորի տակից և առջևի ու յետևի վտանների մոտից ու ապա զգուշորթ թյամբ դուրս քաշել: Յեթե փրկվող կենդանին լծված


վիճակում է, նախապես պետք է նրան կաշկանդող լծասարքերը կոտրտել և կապանքները կտրատել։

Հրդեհաչեջ խմբերն ու բջիջները պետք է առաջին ոգնությունն հասցնեն նաև այն դեպքերում, յերբ պահանջվում է հրդեհը հանգցնելու կամ հեղեղների ու հորդ անձրևների ժամանակ շենքերի մեջ լցված ջուրը դուրս թափել, յեթե վերջին դեպքերում ջուրը ժամա- նակին դուրս չթափելն ավարիաների, փլումների, նախնի դուրս չթափելն ալարիաների ընդհատման դժբախտ դեպքերի կամ աշխատանքների ընդհատման պատճառ է դառնում՝ այնպիսի հիմնարկություններ- ռում, ինչպիսին են ելեկտրական, հեռախոսային, ջրմուղի կայանները և այլն։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
1. Հրդեհների դեմ կազմակերպված ձևով պայքարելու նշա- նակությունը	6
2. Հրդեհաչեջ խմբի հավաքվելը տաղնապի ժամանակ ու հր- դեհի տեղը հասնելը	9
3. Հրդեհի հետախուզություն	11
4. Մարդկանց, կենդանիների, կոլտնտեսային և պետական գույքը փրկելը	13
5. Զրույ հանգցնող և ջուր մատակարարող միջոցների դասա- փորությունը	17
6. Շլանգային գծերը փռելը	21
7. Փողակավորների (СТВОЛЬЩИК) աշխատանքը	24
8. Կացնավորների աշխատանքը	29
9. Հրդեհի մեկուսացումը	34
10. Հրդեհատեղը քանդելը, ջուր տալը և մաքրելը	36
11. Հրդեհաչեջ խմբի հավաքվելն ու վերադառնալը	37
12. Հրամկազմի պարտականությունները հրդեհի ժամանակ մի քանի հրդեհաչեջ խմբերի կամ բջիջների փոխհարարե- ռությունները միաժամանակ աշխատելիս	39
13. Բնակչության կազմակերպված մասնակցությունը հրդե- հաչեջմանը	46
14. Հրդեհները հանգցնելու առանձին դեպքեր	47
Մուրը վատվելը	47
Հրդեհը չեղակներում	48
Հրդեհը ներսում	50
Հարդի և ծղոտի հրդեհը բաց տեղում	52
Հրդեհը փայտի պահեստներում	53
Հեշտ բոցավառվող հեղուկները հանգցնելը	55
Հրդեհը դարձնելում	56
Հրդեհն ելեկտրական կայաններում և այն շենքերում, վորոնք ունեն բարձր և ցածր լուսավորության հոսանքի ելեկտրական մեքենաներ	58

Հրդեհն արդյունաբերական ձեռնարկություններում	59
Հրդեհն ելեկտրոններում և հացահատիկային պահեստներում	61
Հրդեհն հողմնաղացներում	63
Հրդեհն մեխանիկական շարժիչներում գործող աղացներում	65
Հրդեհն ջրաղացներում	66
Հրդեհն կրողաղացներում ու կորեկաղացներում	67
Հրդեհն խրճանոցներում	67
Հրդեհն ձիթագործարաններում, ձուլի և սպիրտի գործարաններում	68
Հրդեհն հիվանդանոցներում	70
Հրդեհն հանրային հաստատությունների շենքերում	71
Հրդեհն գյուղական թատրոններում և հասարակական հավաքավայրերում	71
Մարդկանց վրայի հազուսուրի հրդեհն հանդիսանում	75
Հրդեհն անտառներում	76
Հրդեհն դաշտերում—տափաստաններում	78
Հացահատիկների հրդեհն դաշտում՝ չհնձած ժամանակ և հնձելու ու կալսելու տեղերում	79
Տարերային հրդեհներ	82
15. Հրդեհաշեջ խմբերի և կամավոր բջիջների առաջին տեսնելի-կան ողնությունը՝ աղետների, հեղեղների և այլ տարերային դժբախտությունների ժամանակ	84



448

13.975

807

1
2